

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ
(ՀԱԿԱԴԵՄՓԻՆԳԱՅԻՆ) ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Մոսկվա, 2008 թվականի հունվարի 25)

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում, այսուհետ՝ Կողմեր,

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Կիրառության ոլորտը

1. Սույն Համաձայնագրով կարգավորվում են օտարերկրյա պետություններում ծագող եւ Մաքսային միության միասնական մաքսային տարածքի համար նախատեսված ապրանքների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների սահմանման եւ կիրառման առումով ծագող հարաբերությունները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Սույն Համաձայնագրով չեն կարգավորվում ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքների փոխանցման կամ մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման

իրավունքի տրամադրման, ներդրումների կատարման, արժույթային եւ արտահանման վերահսկման հետ կապված հարաբերությունները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 1-1

Մաքսային միության՝ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների իրավական բազան

(ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Մաքսային միության՝ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների իրավական բազան կազմում են՝

1) սույն Համաձայնագիրը եւ Կողմ հանդիսացող պետությունների միջազգային պայմանագրերը, որոնք կնքվել են Մաքսային միության ձեւավորման շրջանակներում եւ որոնցով կարգավորվում են իրավահարաբերությունները հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման բնագավառում, այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին.

2) Մաքսային միության մարմինների որոշումները, որոնք ընդունվում են սույն Համաձայնագրին եւ (կամ) Մաքսային միության ձեւավորման շրջանակներում Կողմ հանդիսացող պետությունների կողմից կնքված միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 2

Հիմնական տերմինները

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սույն Համաձայնագրում օգտագործվող տերմիններն ունեն հետեւյալ իմաստը՝

«**Նույնանման ապրանք**»՝ ապրանք, որն ամբողջությամբ նույնական է այն ապրանքի հետ, որն ուսումնասիրության (կրկնակի ուսումնասիրության) առարկա է կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա, կամ նման ապրանքի բացակայության դեպքում՝ այլ ապրանք, որն իր հատկանիշներով մոտ է այն ապրանքի հատկանիշներին, որն ուսումնասիրության առարկա է կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա.

«**Հակազնազցման (հակադեմպինգային) միջոց**»՝ գնագոյ ձերմուծմանը հակազդելու միջոց, որը կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ՝ հակազնազցման տուրք՝ ներառյալ ժամանակավոր հակազնազցման տուրք սահմանելու կամ արտահանողի կողմից ընդունված գնային պարտավորությունները հաստատելու միջոցով.

«**Հակազնազցման տուրք**»՝ տուրք, որը կիրառվում է հակազնազցման միջոցի սահմանման դեպքում եւ որը գանձվում է Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքից անկախ:

«**Գնազցման չափ**»՝ ապրանքի սովորական արժեքի եւ այդ ապրանքի արտահանման գնի տարբերության եւ դրա արտահանման գնի հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով, կամ ապրանքի սովորական արժեքի եւ դրա արտահանման գնի տարբերությունը՝ արտահայտված բացարձակ ցուցանիշներով.

«**Ներմուծման քվոտա**»՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքի ներմուծման սահմանափակում՝ վերջինիս քանակի եւ (կամ) արժեքի առումով.

«**Օտարերկրյա պետություն**»՝ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետություն (պետությունների միություն), ինչպես նաեւ այն տարածքը, որն ընդգրկված է Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատվող Աշխարհի երկրների դասակարգչի մեջ.

«**Փոխհատուցման միջոց**»՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարների ազդեցության չեզոքացման միջոց, որը կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ՝ փոխհատուցման տուրք՝ ներառյալ սկզբնական փոխհատուցման տուրք սահմանելու, կամ լրավճար տրամադրող օտարերկրյա պետության լիազոր մարմնի կամ արտահանողի կողմից ընդունված պարտավորությունները հաստատելու միջոցով.

«Փոխհատուցման տուրք»՝ տուրք, որը կիրառվում է փոխհատուցման միջոց սահմանելու դեպքում եւ գանձվում է Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքից անկախ.

«Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս»՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի դրության՝ ապացույցներով հաստատված վատթարացում, որը, մասնավորապես, արտահայտվում է Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրության ծավալի եւ Կողմ հանդիսացող պետությունների շուկայում դրա իրացման ծավալի կրճատմամբ, նման ապրանքի արտադրության եկամտաբերության նվազեցմամբ, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության տվյալ ճյուղում ապրանքային պաշարների, զբաղվածության, աշխատավարձի մակարդակի եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության տվյալ ճյուղ ներդրումների կատարման մակարդակի վրա բացասական ազդեցությամբ.

«Անմիջականորեն մրցակցող ապրանք»՝ ապրանք, որը համադրելի է այն ապրանքի հետ, որն ուսումնասիրության առարկա է (կրկնակի ուսումնասիրության) կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա, իր նշանակությամբ, կիրառմամբ, որակական եւ տեխնիկական հատկանիշներով, կամ այլ հիմնական հատկություններով այնպես, որ գնորդն սպառման ընթացքում փոխարինում է կամ պատրաստ է փոխարինել տվյալ ապրանքն այն ապրանքի հետ, որն ուսումնասիրության առարկա է (կրկնակի ուսումնասիրության) կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա.

«Առետրի բնականոն ընթացք»՝ արտահանող օտարերկրյա պետության շուկայում նույնանման ապրանքի առքուվաճառքը վերջինիս ինքնարժեքի կշռված միջինից ոչ ավելի ցածր այնպիսի գնով, որը սահմանվում է արտադրության ծախքերի կշռված միջինի եւ առետրային, վարչական եւ ընդհանուր ծախքերի կշռված միջինի հիման վրա:

«Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղ»՝ Կողմ հանդիսացող պետությունների նույնանման ապրանքի (հակազնագցման եւ փոխհատուցման ուսումնասիրությունների նպատակով) կամ նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրությունների նպատակով) բոլոր արտադրողները, կամ նրանցից նրանք, որոնց մասնաբաժինը Կողմ հանդիսացող պետությունների համապատասխանաբար նույնանման ապրանքի կամ նույնանման կամ

անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի մեջ կազմում է հիմնական մասը, բայց ոչ պակաս, քան 25 տոկոսը.

«Հատուկ պաշտպանական, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարողներ (այդ թվում ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքեր)»՝ հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց վրա, Մաքսային միության Մաքսային օրենսգրքի, Կողմ հանդիսացող պետությունների միջազգային պայմանագրերի եւ (կամ) Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության համաձայն դրված է ներմուծման մաքսատուրքի եւ հարկերի վճարման պարտավորություններ օտարերկրյա պետություններից Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող այն ապրանքների համար, որոնց նկատմամբ կիրառվում են հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքեր (այդ թվում՝ ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքեր).

«Նախորդող ժամանակահատված»՝ ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումի ներկայացման օրվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարի, որոնց համար առկա են անհրաժեշտ վիճակագրական տվյալներ.

«Առնչվող անձինք»՝ անձինք, որոնք համապատասխանում են ներքոնշյալ չափորոշիչներից մեկին կամ մի քանիսին՝

- այս անձանցից յուրաքանչյուրը մյուս անձի մասնակցությամբ ստեղծված կազմակերպության աշխատողը կամ ղեկավարն է.
- անձինք աշխատանքային գործընկերներ են, այսինքն՝ կապված են միմյանց հետ պայմանագրային հարաբերություններով, գործում են եկամուտ ստանալու նպատակով եւ համատեղ են կրում այն ծախսերն ու կորուստները, որոնք կապված են համատեղ գործունեության իրականացման հետ.
- անձինք մեկ կազմակերպության գործատուներ կամ աշխատողներ են.
- անձանցից մեկին են անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն պատկանում, նա է վերահսկում կամ համարվում քվեարկող բաժնետոմսերի 5 եւ ավելի տոկոսի կամ միաժամանակ երկու անձանց մասնաբաժնի անվանական սեփականատերը.
- մեկ անձն անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն վերահսկում է մյուս անձին.
- երկու անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին.
- երկու անձինք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին.

- անձինք գտնվում են ամուսնական հարաբերությունների մեջ, արյունակիցներ կամ մերձավորներ են, ինչպես նաև որդեգրող եւ որդեգրված, կամ խնամակալ եւ խնամարկյալ են:

Ընդ որում, անմիջական վերահսկողություն ասելով ենթադրվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի ունեցած հնարավորությունը՝ հաստատելու իրավաբանական անձի կողմից ընդունված որոշումները ներքոնշյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի միջոցով՝

- վերջինիս գործադիր մարմնի գործառույթների կատարում.
- իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանների սահմանելու իրավունքի ձեռքբերում.
- Կանոնադրական (պահուստային) կապիտալը (ֆոնդը) կազմող բաժնետոմսերով (մասնաբաժնով) տրվող ձայների ընդհանուր քանակի 5-ից ավելի տոկոսի տնօրինում:

Ոչ անմիջական վերահսկողություն ասելով ենթադրվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի ունեցած հնարավորությունը՝ հաստատելու իրավաբանական անձի կողմից ընդունված որոշումները ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջոցով կամ մի քանի իրավաբանական անձանց միջոցով, որոնց միջեւ առկա է անմիջական վերահսկողություն.

«Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնաս»՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի արտադրական, առևտրային եւ ֆինանսական դրության էական վատթարացում, որն արտահայտվում է Կողմ հանդիսացող պետություններում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրության հետ կապված դրության ընդհանուր վատթարացմամբ:

«Հատուկ պաշտպանական միջոց»՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքի ներմուծման ավելացված ծավալը սահմանափակելու միջոց, որը կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ ներմուծման քվոտա կամ հատուկ տուրք՝ ներառյալ սկզբնական հատուկ տուրք սահմանելու միջոցով.

«Հատուկ տուրք»՝ տուրք, որը կիրառվում է հատուկ պաշտպանական միջոց սահմանելու դեպքում եւ գանձվում է Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքից անկախ:

«Լրավճարված ներմուծում»՝ ապրանքի ներմուծում Մաքսային միության միասնական մաքսային տարածք, որի արտադրության, արտահանման կամ փոխադրման համար օգտագործվել են արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճար.

«Լրավճար տրամադրող մարմին»՝ արտահանող օտարերկրյա պետության պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին, ինչպես նաև անձ, որը գործում է համապատասխան պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի հանձնարարությամբ, կամ որը լիազորված է համապատասխան պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ իրավական ակտի համաձայն կամ ելնելով փաստացի հանգամանքներից».

«Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ»՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու՝ ապացույցներով հաստատված անխուսափելիությունը.

«Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին լուրջ վնաս հասցնելու վտանգ»՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին լուրջ վնաս հասցնելու՝ ապացույցներով հաստատված անխուսափելիությունը.

«Արտահանման գին»՝ գին, որը վճարվել է կամ պետք է վճարվի օտարերկրյա արտադրողների կամ արտահանողների հետ կապ չունեցող անձինք հանդիսացող գնորդների կողմից՝ ապրանքը Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծելու դեպքում:

Հոդված 3

Ուսումնասիրություն

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1. Ապրանքի ներմուծման դեպքում հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոց սահմանելուն նախորդում է սույն Համաձայնագրի համաձայն անցկացվող ուսումնասիրությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ուսումնասիրությունն անցկացվում է հաստատելու համար՝

Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծման ավելացված ծավալի եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայությունը.

Մաքսային միության միասնական մաքսային տարածք գնագցող կամ լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայություն կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման զգալի դանդաղում:

3. Հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոց սահմանելու եւ կիրառելու՝ ներառյալ ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնագցման կամ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու եւ կիրառելու, հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոցը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի 40-րդ հոդվածի դրույթների համաձայն միջոցը չկիրառելու մասին որոշումն ընդունվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

4. Ուսումնասիրության անցկացման համար պատասխանատու մարմինը (այսուհետ՝ ուսումնասիրություն իրականացնող մարմին) որոշվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

5. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը գործում է սույն Համաձայնագրով եւ Մաքսային միության մարմինների այն որոշումներով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, որոնք ընդունվում են սույն Համաձայնագրի եւ (կամ) Մաքսային միության ձեւավորման շրջանակներում Կողմերի կնքած միջազգային այլ պայմանագրերի համաձայն:

6. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն ուսումնասիրության արդյունքների հիման վրա Մաքսային միության հանձնաժողովին ներկայացնում է հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոց սահմանելու եւ կիրառելու կամ հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոցը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու նպատակահարմարության մասին առաջարկություններ պարունակող զեկույց՝ դրան կցելով Մաքսային միության համապատասխան որոշման նախագիծը:

7. Սույն Համաձայնագրի 6-րդ, 14-րդ եւ 24-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան ուսումնասիրության ավարտը Մաքսային միության հանձնաժողովին ներկայացնում է ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնագման կամ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու եւ կիրառելու նպատակահարմարության մասին առաջարկություններ պարունակող զեկույց:

8. Ուսումնասիրությանն առնչվող ապացույցները, տեղեկությունները եւ նամակագրությունը պետք է ներկայացվեն ուսումնասիրություն իրականացնող մարմին՝ ռուսերենով, իսկ օտար լեզվով կազմված փաստաթղթերի բնօրինակներին պետք է կցված լինի դրանց վավերացված ռուսերեն թարգմանությունը:

II. Հատուկ պաշտպանական միջոցներ

Հոդված 4

Հատուկ պաշտպանական միջոցի կիրառման ընդհանուր դրույթները

1. Հատուկ պաշտպանական միջոցը կարող է կիրառվել ապրանքի նկատմամբ միայն այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է, որ Մաքսային միության միասնական մաքսային տարածք տվյալ ապրանքի ներմուծումը կատարվում է այնպիսի ավելացված քանակություններով (բացարձակ կամ հարաբերական ցուցանիշներով՝ համեմատած Կողմ հանդիսացող պետություններում արտադրության նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի ընդհանուր ծավալի հետ) եւ այնպիսի պայմաններով, որ այն լուրջ վնաս է հասցնում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին կամ ստեղծում նման վնաս հասցնելու վտանգ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է այն ապրանքի նկատմամբ, որը ներմուծվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանող օտարերկրյա պետությունից՝ անկախ դրա ծագման երկրից, բացառությամբ այն ապրանքի, որը ծագում է Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող զարգացող երկրից, եթե նման երկրից ծագող տվյալ ապրանքի

ներմուծման մասնաբաժինը չի գերազանցում Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող տվյալ ապրանքի ամբողջ ծավալի 3 տոկոսը՝ պայմանով, որ զարգացող այն երկրներից տվյալ ապրանքի ներմուծման ընդհանուր մասնաբաժինը, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը կազմում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող տվյալ ապրանքի ընդհանուր ծավալի 3 տոկոսից ոչ ավելին, չի գերազանցում Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող տվյալ ապրանքի ընդհանուր ծավալի 9 տոկոսը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 5

Ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի հաստատումը

1. Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի հաստատման նպատակով, ուսումնասիրություն իրականացնող մարմինն ուսումնասիրության ընթացքում գնահատում է այն օբյեկտիվ գործոնները, որոնք կարող են արտահայտված լինել քանակական ցուցանիշներով, եւ որոնք ազդեցություն են թողնում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի տնտեսական վիճակի վրա, այդ թվում՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման աճի տեմպերը եւ ծավալը՝ բացարձակ կամ հարաբերական ցուցանիշներով՝ համեմատած Կողմ հանդիսացող պետություններում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրության կամ սպառման ընդհանուր ծավալի հետ.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ներմուծվող ապրանքի մասնաբաժինը՝ Կողմ հանդիսացող պետությունների շուկայում տվյալ ապրանքի եւ նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի վաճառքի ընդհանուր ծավալի մեջ.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3) ուսումնասիրության առարկա հանդիսացող ներմուծվող ապրանքի գների մակարդակը՝ Կողմ հանդիսացող պետություններում արտադրվող նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի գների մակարդակի հետ համեմատությամբ.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4) Կողմ հանդիսացող պետություններում արտադրվող նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի՝ Կողմ հանդիսացող պետությունների շուկայում վաճառքի ծավալի փոփոխությունը.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5) նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրության ծավալի, արտադրողականության, արտադրական կարողությունների օգտագործման, շահույթների եւ վնասների, ինչպես նաեւ զբաղվածության մակարդակի փոփոխությունը Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղերում:

2. Ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ նման վնաս հասցնելու վտանգը հաստատվում են գործին առնչվող եւ ուսումնասիրություն իրականացնող մարմնի ունեցած բոլոր ապացույցների եւ տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, ներմուծման ավելացված ծավալից բացի վերլուծում է այնպիսի հայտնի գործոններ, որոնց հետեւանքով միեւնույն ժամանակահատվածում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցվում է լուրջ վնաս կամ առաջանում է նման վնաս հասցնելու վտանգ: Տվյալ վնասը չպետք է համարվի Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծված ավելացված ծավալի հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 6

Ժամանակավոր հատուկ տուրք սահմանելը

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1. Ծայրահեղ պայմաններում, երբ հատուկ պաշտպանական միջոցի կիրառումն ուշացնելն այնպիսի լուրջ վնաս կհասցնե՞ր Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին, որը հետագայում դժվար կլինե՞ր վերացնել, Մաքսային միության հանձնաժողովը նախքան համապատասխան ուսումնասիրության ավարտը կարող է 200 օրը չգերազանցող ժամկետով ժամանակավոր հատուկ տուրք սահմանելու եւ կիրառելու մասին որոշում կայացնել՝ հիմք ընդունելով ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախնական եզրակացությունը, համաձայն որի առկա են ակնհայտ ապացույցներ, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ավելացված ծավալը հասցրել կամ կարող է լուրջ վնաս հասցնել Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին: Ուսումնասիրությունը պետք է շարունակվի ուսումնասիրություն իրականացնող մարմնի վերջնական եզրակացություն ստանալու համար:

2. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը գրավոր տեղյակ է պահում արտահանող օտարերկրյա պետության լիազոր մարմնին, ինչպես նաեւ իրեն հայտնի այլ շահագրգիռ անձանց ժամանակավոր հատուկ միջոցի հնարավոր սահմանման մասին:

3. Արտահանող օտարերկրյա պետության լիազոր մարմնի կողմից՝ ժամանակավոր հատուկ տուրք սահմանելու առումով խորհրդակցություն անցկացնելու մասին հարցում ներկայացվելու դեպքում, նման խորհրդակցությունները պետք է սկսվեն Մաքսային միության հանձնաժողովի կողմից ժամանակավոր հատուկ տուրք սահմանելու մասին որոշումն ընդունելուց հետո:

4. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով հաստատվում է, որ հատուկ պաշտպանական միջոց սահմանելու համար հիմքերը բացակայում են, ժամանակավոր հատուկ տուրքի գումարները պետք է վերադարձվեն վճարողին սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

5. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով ընդունվել է հատուկ պաշտպանական միջոցի կիրառման մասին որոշում (այդ թվում՝ ներմուծման քվոտա սահմանելու միջոցով), ժամանակավոր հատուկ տուրքի գործողության ժամկետն

ընդգրկվում է հատուկ պաշտպանական միջոցի գործողության ընդհանուր ժամկետի մեջ, իսկ ժամանակավոր հատուկ տուրքի գումարները, սկսած ուսումնասիրության արդյունքներով ընդունված հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, հաշվեգրվում եւ բաշխվում են սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերի դրույթները:

6. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվել սահմանել հատուկ տուրքի՝ ժամանակավոր հատուկ տուրքի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափ, ժամանակավոր հատուկ տուրքի գումարները, որոնք համապատասխանում են հատուկ տուրքի հաստատված դրույքաչափի համաձայն հաշվարկված հատուկ տուրքի գումարին, հաշվեգրվում եւ բաշխվում են սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

Ժամանակավոր հատուկ տուրքի գումարները, որոնք գերազանցում են հատուկ տուրքի հաստատված դրույքաչափով հաշվարկված հատուկ տուրքի գումարը, պետք է վերադարձվեն վճարողին սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

7. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվել սահմանել ժամանակավոր հատուկ տուրքի դրույքաչափը գերազանցող հատուկ տուրքի դրույքաչափ, հատուկ տուրքի եւ ժամանակավոր հատուկ տուրքի գումարների միջեւ տարբերությունը չի գանձվում:

Հոդված 7

Հատուկ պաշտպանական միջոցի կիրառումը

1. Հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է Մաքսային միության Հանձնաժողովի որոշմամբ այն չափով եւ ժամկետով, որոնք անհրաժեշտ են Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը վերացնելու, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի՝ փոփոխվող տնտեսական պայմաններին ադապտացման գործընթացը հեշտացնելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Այն դեպքում, երբ հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է ներմուծման քվոտա սահմանելու միջոցով, նման ներմուծման քվոտայի չափը չպետք է ավելի ցածր լինի ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի միջին տարեկան ներմուծման ծավալից (քանակային կամ արժեքային արտահայտությամբ) նախորդող ժամանակահատվածի կտրվածքով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ավելի փոքր չափի ներմուծման քվոտայի սահմանումն անհրաժեշտ է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ նման վնաս հասցնելու վտանգը վերացնելու համար:

(2-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Արտահանող օտարերկրյա պետությունների միջև ներմուծման քվոտան բաշխելիս, այն պետություններին, որոնք հետաքրքրված են իրականացնելու ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարում Մաքսային միության միասնական մաքսային տարածք, հնարավորություն է տրվում անցկացնել խորհրդակցություն ներմուծման քվոտան իրենց միջև բաշխելու հարցի վերաբերյալ:

(3-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված խորհրդակցության անցկացման հնարավորություն չի տրվում կամ դրա անցկացման ընթացքում նման բաշխման առումով համաձայնություն չի հաստատվում, ներմուծման քվոտան բաշխվում է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանում իրականացնելու հարցում հետաքրքրված արտահանող օտարերկրյա պետությունների միջև այն համամասնությամբ, որը ձեւավորվել է ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմում ներկայացնելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում տվյալ ապրանքն այդ արտահանող պետություններից ներմուծելիս՝ հիմք ընդունելով այդ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալը՝ քանակային կամ արժեքային արտահայտությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ընդ որում հաշվի է առնվում ցանկացած հատուկ գործոն, որը կարող էր կամ կարող է ազդել այդ ապրանքի առետրի ընթացքի վրա:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

5. Այն դեպքում, երբ տոկոսային հարաբերությամբ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ առանձին արտահանող օտարերկրյա պետություններից ներմուծման աճը ոչ համամասնորեն ավելացել է տվյալ ապրանքի ներմուծման ընդհանուր աճի նկատմամբ, ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմում ներկայացնելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում, որի համար առկա են վիճակագրական տվյալներ, Մաքսային միության հանձնաժողովը կարող է բաշխել ներմուծման քվոտան այդ արտահանող օտարերկրյա պետությունների միջև՝ հաշվի առնելով այդ արտահանող օտարերկրյա պետություններից նշված ապրանքի՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծման աճի բացարձակ եւ հարաբերական ցուցանիշները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սույն կետի դրույթները կիրառվում են բացառապես այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի առկայությունը:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

6. Այն ապրանքի ներմուծումը Մաքսային միության միասնական մաքսային տարածք, որի նկատմամբ որպես հատուկ պաշտպանական միջոց ներմուծման քվոտա սահմանելու մասին որոշում է ընդունվել, իրականացվում է լիցենզիայի հիման վրա, որը տրվել է այն ապրանքների համար սահմանված կարգով, որոնց ներմուծման համար կիրառվում են քանակական սահմանափակումներ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7 - 9. հանվել են. - 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրություն

Հոդված 8

Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետն ու վերանայումը

1. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 4 տարին՝ բացառությամբ երբ տվյալ միջոցի գործողության ժամկետը երկարաձգվում է սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն:

2. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը, որը նշված է սույն հոդվածի 1-ին կետում, կարող է երկարաձգվել Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է, որ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի վերացման համար անհրաժեշտ է հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի երկարաձգում, եւ առկա են ապացույցներ այն մասին, որ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության համապատասխան ճյուղը միջոցներ է ձեռնարկում, որոնք խթանում են տվյալ ճյուղի ադապտացումը փոփոխվող տնտեսական պայմաններին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Կրկնակի ուսումնասիրություն անցկացնելիս, հաշվի առնելով համապատասխան տարբերությունները, կիրառվում են ուսումնասիրության անցկացմանը վերաբերող դրույթները:

3. Մաքսային միության հանձնաժողովի կողմից հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի երկարաձգման մասին որոշում ընդունելու դեպքում տվյալ միջոցը չի կարող ավելի սահմանափակող լինել, քան այն հատուկ պաշտպանական միջոցը, որը գործում էր հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի երկարաձգման մասին որոշումն ընդունելու օրը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Այն դեպքում, երբ հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը գերազանցում է մեկ տարին, Մաքսային միության հանձնաժողովն աստիճանաբար մեղմացնում է տվյալ հատուկ պաշտպանական միջոցը՝ վերջինիս գործողության ժամկետի ընթացքում սահմանելով հավասար ժամկետով ընդմիջումներ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը գերազանցում է 3 տարին, ուսումնասիրություն իրականացնող մարմինը տվյալ միջոցի գործողության ժամկետի կեսը լրանալուց ոչ ուշ անցկացնում է կրկնակի ուսումնասիրություն, որի արդյունքներով հատուկ պաշտպանական միջոցը կարող է պահպանվել, մեղմացվել կամ չեղյալ հայտարարվել:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սույն հոդվածի նպատակներով հատուկ պաշտպանական միջոցի մեղմացում ասելով ենթադրվում է ներմուծման քվոտայի չափի ավելացում կամ հատուկ տուրքի դրույքաչափի նվազեցում:

5. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ընդհանուր ժամկետը, որը ներառում է ժամանակավոր հատուկ տուրքի գործողության ժամկետը եւ այն ժամկետը, որով երկարաձգվում է հատուկ պաշտպանական միջոցի գործողությունը, չպետք է գերազանցի 8 տարին:

6. Այն ապրանքի նկատմամբ, որի համար ավելի վաղ արդեն կիրառվել է հատուկ պաշտպանական միջոց, չի կարող կրկնակի անգամ կիրառվել հատուկ պաշտպանական միջոց նախորդ հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետին հավասար ժամանակահատվածի ընթացքում: Ընդ որում, այն ժամկետը, որի ընթացքում հատուկ պաշտպանական միջոցը չի կիրառվում, չի կարող 2 տարուց պակաս լինել:

7. Հատուկ պաշտպանական միջոցը, որի գործողության ժամկետը կազմում է 180 կամ ավելի քիչ թվով օր, անկախ սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթներից, կարող է կրկին կիրառվել նույն ապրանքի նկատմամբ, եթե նախորդ հատուկ պաշտպանական միջոցի սահմանման օրվանից անցել է ոչ քիչ, քան մեկ տարի եւ նոր հատուկ պաշտպանական միջոց սահմանելու օրվան նախորդող 5 տարվա ընթացքում նման ապրանքի նկատմամբ հատուկ պաշտպանական միջոցը չի կիրառվել ավելի, քան 2 անգամ:

III. Հակազնագցման միջոցներ

Հոդված 9

Հակազնագցման միջոցների կիրառման ընդհանուր սկզբունքները

1. Հակազնագցման միջոցը կարող է կիրառվել գնագոյ ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի նկատմամբ այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ տվյալ ապրանքի ներմուծումը Մաքսային միության միասնական մաքսային տարածք նյութական վնաս է հասցնում Կողմ հանդիսացող պետությունների

տնտեսության ճյուղին, ստեղծում է նման վնաս հասցնելու վտանգ կամ էականորեն դանդաղեցնում է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծումը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ապրանքը գնագցող ներմուծման առարկա է այն դեպքում, երբ տվյալ ապրանքի արտահանման գինը վերջինիս սովորական արժեքից ցածր է:

3. Սույն բաժնի նպատակներով՝ ուսումնասիրության տեւողությունը սահմանվում է, որպես կանոն, ուսումնասիրության անցկացման մասին դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիս ժամկետին հավասար ժամկետով, սակայն ցանկացած պարագայում այդ տեւողությունը չպետք է 6 ամսից պակաս լինի:

Հոդված 10

Գնագցման չափի որոշումը

1. Գնագցման չափը որոշվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ հիմք ընդունելով հետեւյալ համադրությունները՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) ապրանքի միջին կշռված սովորական արժեքն ապրանքի միջին կշռված արտահանման գնի հետ.

2) առանձին գործարքներով ապրանքի սովորական արժեքն առանձին գործարքներով ապրանքի արտահանման գների հետ.

(2-րդ ենթակետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3) ապրանքի միջին կշռված սովորական արժեքն առանձին գործարքներով ապրանքի արտահանման գների հետ այն դեպքում, երբ ապրանքի գնի մեջ առկա են էական տարբերություններ՝ կախված գնորդներից, տարածաշրջաններից կամ ապրանքի մատակարարման տեւողությունից:

(3-րդ ենթակետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ապրանքի արտահանման գնի համադրումը վերջինիս սովորական արժեքի հետ կիրառվում է առետրային գործառնությունների միեւնույն փուլում եւ հնարավորության դեպքում միեւնույն ժամանակ իրականացված՝ ապրանքի վաճառքի դեպքերի նկատմամբ:

3. Ապրանքի արտահանման գինը վերջինիս սովորական արժեքի հետ համադրելիս իրականացվում է դրանց ճշգրտումը՝ հաշվի առնելով գների համադրելիության վրա ազդող տարբերությունները, այդ թվում՝ մատակարարումների պայմանների եւ բնութագրերի, հարկման, առետրային գործառնությունների փուլերի, քանակական ցուցանիշների, ֆիզիկական հատկանիշների եւ այլ տարբերությունները, որոնց առումով ներկայացվում են դրանց՝ գների համադրելիության վրա ազդեցության ապացույցներ:

Սույն հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերում, հաշվի են առնվում ապրանքի ներմուծման եւ վերավաճառքի միջեւ ընկած ժամանակահատվածում կատարված ծախսերը, այդ թվում՝ վճարված մաքսատուրքը եւ հարկերը, ինչպես նաեւ ստացված շահույթը:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը համոզվում է, որ վերոնշյալ գործոնների հիման վրա կատարվող ճշգրտումները չեն համընկնում մեկը մյուսի հետ՝ այդպիսով խեղաթյուրելով ապրանքի արտահանման գնի եւ սովորական արժեքի համադրման արդյունքը:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

Ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի շահագրգիռ անձանցից պահանջել այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ապրանքի արտահանման գնի՝ վերջինիս սովորական արժեքի հետ պատշաճ կերպով համադրումն ապահովելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Արտահանող օտարերկրյա պետության շուկայում առետրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի առուվաճառքի գործարքների բացակայության դեպքում, կամ այն դեպքում, երբ առետրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի վաճառքի ցածր ծավալի կամ արտահանող օտարերկրյա պետության շուկայում հատուկ դրության պատճառով հնարավոր չէ իրականացնել ապրանքի արտահանման գնի եւ նույնանման ապրանքի արժեքի համադրում արտահանող օտարերկրյա պետության շուկայում վաճառքի իրականացման ընթացքում, ապա ապրանքի արտահանման գինը համադրվում է արտահանող օտարերկրյա պետությունից ուրիշ օտարերկրյա պետություն ներմուծվող նույնանման ապրանքի համեմատելի գնի հետ, այն պայմանով, որ նույնանման

ապրանքի գինը ներկայացուցչական է, կամ ապրանքի արտադրության ծախքերի հետ վերջինիս ծագման երկրում՝ հաշվի առնելով անհրաժեշտ վարչական, առևտրային եւ ընդհանուր ծախքերը եւ շահույթը, որոնք բնորոշ են տնտեսության տվյալ ճյուղին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Այն դեպքում, երբ ապրանքը ներմուծվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք օտարերկրյա այն պետությունից, որը վերջինիս ծագման երկիրը չէ, տվյալ ապրանքի արտահանման գինը համադրվում է օտարերկրյա պետության շուկայում նույնանման ապրանքի համեմատելի գնի հետ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ապրանքի արտահանման գնի համադրումը կարող է իրականացվել նույնանման ապրանքի համեմատելի գնի հետ վերջինիս ծագման երկրում, եթե տվյալ ապրանքը պարզապես տարանցիկ փոխադրվում է այդ օտարերկրյա պետության տարածքով, որտեղից այն արտահանվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք, կամ նման ապրանքի արտադրությունը չի իրականացվում տվյալ օտարերկրյա պետությունում, կամ այդ պետությունում գոյություն չունի նույնանման ապրանքի համեմատելի գին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Այն դեպքում, երբ ապրանքի արտահանման գինը վերջինիս սովորական արժեքի հետ համադրելիս անհրաժեշտ է վերահաշվարկել դրանց արժեքները՝ մի արժույթից մյուսը փոխարկելու համար, ապա նման հաշվարկն իրականացվում է կիրառելով ապրանքի վաճառքի օրվա պաշտոնական փոխարժեքը:

Այն դեպքում, երբ արտարժույթի վաճառքն անմիջականորեն կապված է եղել ապրանքի՝ համապատասխան արտահանման ռեժիմով մատակարարման հետ եւ իրականացվել է որոշակի ժամկետով, օգտագործվում է այն արժույթի փոխարժեքը, որը կիրառվում էր այդ ժամկետով արժույթի վաճառքի ընթացքում:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի չի առնում արժույթի փոխարժեքների տատանումները եւ ուսումնասիրության ընթացքում արտահանողներին տրամադրում է 60 օրացուցային օրից ոչ պակաս ժամանակ նրանց արտահանման գների ճշգրտման համար՝ հաշվի առնելով ուսումնասիրության ընթացքում արժույթի փոխարժեքների հաստատուն փոփոխությունները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, որպես կանոն, սահմանում է առանձին գնագցման չափ ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի եւ (կամ) արտադրողի համար, որը ներկայացրել է առանձին գնագցման չափ սահմանելու համար անհրաժեշտ տեղեկություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

8. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը գալիս է այն եզրակացության, որ ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի եւ (կամ) արտադրողի համար առանձին գնագցման չափի սահմանումն անընդունելի է արտահանողների, արտադրողների կամ ներմուծողների ընդհանուր քանակի, ապրանքի բազմազանության կամ որեւէ այլ պատճառով, ապա նա կարող է սահմանափակում կիրառել առանձին գնագցման չափ սահմանելու առումով՝ ելնելով շահագրգիռ անձանց ընդունելի քանակից, կամ սահմանել գնագցման չափ յուրաքանչյուր արտահանող օտարերկրյա պետության ապրանքի նմուշի համար, որը, համաձայն ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած տեղեկությունների, վիճակագրորեն հիմնավորված է եւ կարող է ուսումնասիրվել՝ չխաթարելով ուսումնասիրության ընթացքը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սույն կետի դրույթներով հաստատված շահագրգիռ անձանց ընտրությունը՝ առանձին գնագցման չափի սահմանումը սահմանափակելու նպատակով, իրականացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ նախընտրելի է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի համապատասխան օտարերկրյա արտահանողների, արտադրողների եւ ներմուծողների հետ խորհրդակցության հիման վրա եւ նրանց համաձայնությամբ:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը կիրառում է սահմանափակում սույն կետի դրույթների համաձայն, ապա այն նաեւ որոշում է գնագցման առանձին չափ յուրաքանչյուր այն օտարերկրյա արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի համար, որն ի սկզբանե չէր ընտրվել, սակայն ներկայացրել էր անհրաժեշտ տեղեկություններ դրանց քննության համար սահմանված ժամկետում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրյա արտահանողների եւ (կամ) օտարերկրյա արտադրողների թիվն այնքան մեծ է,

որ առանձին քննության անցկացումը կարող է հանգեցնել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից համապատասխան ուսումնասիրության իրականացման ժամկետի խախտման:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

Այդ օտարերկրյա արտահանողների եւ (կամ) օտարերկրյա արտադրողների կողմից կամավոր կերպով ներկայացված պատասխանները չպետք է մերժվեն ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

9. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն գնագցման առանձին չափ սահմանելու առումով կիրառում է սահմանափակում, ապա գնագցման չափը, որը հաշվարկվում է գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի այն օտարերկրյա արտահանողների կամ օտարերկրյա արտադրողների համար, որոնք չեն ընտրվել գնագցման առանձին չափ սահմանելու համար, սակայն ուսումնասիրության ընթացքում ներկայացրել են անհրաժեշտ տեղեկություններ դրանց քննության համար նախատեսված ժամկետում, չպետք է գերազանցի գնագցման այն միջին կշռված չափը, որը սահմանվել է գնագցման առանձին չափ սահմանելու համար ընտրված գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի օտարերկրյա արտահանողների կամ օտարերկրյա արտադրողների համար:

(9-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Եթե ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողները կամ արտադրողներն ուսումնասիրություն իրականացնող մարմին չեն ներկայացնում համապատասխան տեղեկությունները պահանջվող ձևով եւ սահմանված ժամկետում, կամ նրանց կողմից ներկայացված տեղեկությունները չեն կարող ստուգվել կամ չեն համապատասխանում իրականությանը, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է գնագցման չափը սահմանել՝ հիմք ընդունելով իր տրամադրության տակ եղած այլ տեղեկությունները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

11. Գնագցման առանձին չափ սահմանելու համար անհրաժեշտ տեղեկություններ ներկայացրած ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի եւ (կամ) արտադրողի համար գնագցման առանձին չափ սահմանելուց բացի, ուսումնասիրություն իրականացնող

մարմինը կարող է գնագցման չափ սահմանել ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մյուս բոլոր արտահանողների եւ (կամ) արտադրողների համար՝ ուսումնասիրության ընթացքում սահմանված գնագցման ամենաբարձր չափի հիման վրա:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 11

Ապրանքի սովորական արժեքի սահմանումը

1. Ապրանքի սովորական արժեքը սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ հիմք ընդունելով նույնանման ապրանքի այն գները, որոնք գործում են վերջինս՝ ուսումնասիրության իրականացման ժամանակահատվածում արտահանող օտարերկրյա պետության ներքին շուկայում առետորի բնականոն ընթացքի դեպքում մրցակցային պայմաններով արտահանող օտարերկրյա պետության մաքսային տարածքում օգտագործելու նպատակով այն գնորդներին վաճառելիս, որոնք այդ օտարերկրյա պետության ռեզիդենտ հանդիսացող արտադրողների կամ արտահանողների հետ կապ չունեցող անձինք են:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սովորական արժեքը սահմանելու նպատակով՝ կարող են հաշվի առնվել նույնանման ապրանքի այն գները, որոնք գործում են վերջինս այն գնորդներին վաճառելիս, որոնք այդ օտարերկրյա պետության ռեզիդենտ հանդիսացող արտադրողների կամ արտահանողների հետ կապ ունեցող անձինք են, այն դեպքում, երբ հաստատվում է, որ նշված կապը չի ազդում օտարերկրյա արտադրողի եւ (կամ) արտահանողի գնային քաղաքականության վրա:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Արտահանող օտարերկրյա պետության շուկայում առետորի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի վաճառքի ծավալը համարվում է բավարար ապրանքի սովորական արժեքը սահմանելու համար, եթե այդ ծավալը կազմում է ոչ պակաս, քան արտահանող օտարերկրյա պետությունից Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքի արտահանման ընդհանուր ծավալի 5 տոկոսը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Առեւտրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի վաճառքի ավելի փոքր ծավալը համարվում է ընդունելի ապրանքի սովորական արժեքը սահմանելու համար, եթե առկա են ապացույցներ, որ տվյալ ծավալը բավարար է՝ ապահովելու համար առեւտրի բնականոն ընթացքի պայմաններում ապրանքի արտահանման գնի եւ նույնանման ապրանքի գնի պատշաճ համադրումը:

3. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ապրանքի սովորական արժեքը սահմանելիս՝ արտահանող օտարերկրյա պետության ներքին շուկայում ապրանքը գնորդներին վաճառելու ընթացքում ապրանքի գին է համարվում այն միջին կշռված գինը, որով նույնանման ապրանքը վաճառվել է գնորդներին ուսումնասիրության ընթացքում, կամ ապրանքի այն գինը, որով այդ ժամանակահատվածի ընթացքում իրականացվել է գնորդներին դրա ցանկացած առանձին վաճառքը:

4. Արտահանող օտարերկրյա պետության շուկայում կամ արտահանող օտարերկրյա պետությունից մեկ այլ օտարերկրյա պետություն նույնանման ապրանքի վաճառքը նույնանման ապրանքի մեկ միավորի արտադրության ինքնարժեքից ցածր գներով՝ հաշվի առնելով վարչական, առեւտրային եւ ընդհանուր ծախքերը, կարող է հաշվի չառնվել ապրանքի սովորական արժեքը սահմանելիս միայն այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ նույնանման ապրանքի նման վաճառքն ուսումնասիրության ընթացքում իրականացվում է բավականաչափ ծավալով եւ այնպիսի գներով, որոնցով չի ապահովվում այդ ընթացքում առաջացած բոլոր ծախքերի փոխհատուցումը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Այն դեպքում, երբ նույնանման ապրանքի գինը, որը վերջինիս վաճառքի պահին ցածր է ապրանքի միավորի արտադրության ինքնարժեքից՝ հաշվի առնելով վարչական, առեւտրային եւ ընդհանուր ծախքերը, գերազանցում է ապրանքի միավորի արտադրության միջին կշռված ինքնարժեքը՝ հաշվի առնելով ուսումնասիրության ընթացքում վարչական, առեւտրային եւ ընդհանուր ծախքերը, ապա այդ գինն ընդունվում է որպես ուսումնասիրության ընթացքում բոլոր ծախքերի փոխհատուցումն ապահովող գին:

6. Նույնանման ապրանքի վաճառքը նույնանման ապրանքի միավորի արտադրության ինքնարժեքից ցածր գներով՝ հաշվի առնելով վարչական, առեւտրային եւ ընդհանուր ծախքերը, համարվում է իրականացված բավականաչափ ծավալով այն դեպքում, երբ

ապրանքի սովորական արժեքը սահմանելիս հաշվի առնվող գործարքներով նույնանման ապրանքի միջինը կշռված գինը ցածր է նույնանման ապրանքի միավորի արտադրության միջին կշռված ինքնարժեքից՝ հաշվի առնելով վարչական, առետրային եւ ընդհանուր ծախքերը, եւ այդ ինքնարժեքից ցածր գներով վաճառքի ծավալը կազմում է ոչ պակաս, քան ապրանքի սովորական արժեքը սահմանելիս հաշվի առնվող գործարքներով վաճառքի ծավալի 20 տոկոսը:

7. Ապրանքի մեկ միավորի արտադրության ինքնարժեքը՝ հաշվի առնելով վարչական, առետրային եւ ընդհանուր ծախքերը, հաշվարկվում է ապրանքի արտահանողի կամ արտադրողի կողմից տրամադրված տվյալների հիման վրա՝ պայմանով, որ այդ տվյալները համապատասխանում են արտահանող օտարերկրյա պետության հաշվապահական հաշվառման եւ հաշվետվության համընդհանուր սկզբունքներին եւ կանոններին եւ լիովին արտացոլում են ապրանքի արտադրության եւ վաճառքի հետ կապված ծախքերը:

8. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի է առնում իր տրամադրության տակ եղած արտադրության ծախքերի, վարչական, առետրային եւ ընդհանուր ծախքերի ճիշտ բաշխման ապացույցները, այդ թվում՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կամ արտադրողի կողմից տրամադրված տվյալները՝ պայմանով, որ ծախքերի տվյալ բաշխումը սովորաբար կիրառվի ապրանքի տվյալ արտահանողի կամ արտադրողի կողմից՝ մասնավորապես մաշվածության համապատասխան ժամանակահատվածը սահմանելու, կապիտալ ներդրումների գծով մասնահանումների համար, ինչպես նաեւ արտադրության զարգացմանն ուղղված կատարվող այլ ծախքերի նկատմամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Արտադրության ծախքերը, վարչական, առետրային եւ ընդհանուր ծախքերը ճշգրտվում են՝ հաշվի առնելով արտադրության զարգացման հետ կապված միանվագ ծախսերը, կամ այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում արտադրության կազմակերպման ժամանակահատվածում իրականացվող գործառույթներն ազդեցություն են թողնում ծախքերի վրա ուսումնասիրության անցկացման ընթացքում: Նման ճշգրտումները պետք է ցույց տան ծախքերն արտադրության կազմակերպման ժամկետի վերջում, իսկ այն դեպքում, երբ արտադրության կազմակերպման ժամկետը գերազանցում է ուսումնասիրության ժամկետը՝ արտադրության կազմակերպման ամենաուշ փուլում, որի ընթացքում իրականացվել է ուսումնասիրությունը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Վարչական, առեստրային եւ ընդհանուր ծախքերի ու շահույթի ընդհանուր քանակական ցուցանիշները, որոնք բնորոշ են տնտեսության տվյալ ճյուղի համար, սահմանվում են՝ հիմք ընդունելով առեստրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի արտադրության եւ վաճառքի մասին փաստացի տվյալները, որոնք ներկայացվում են գնագոյն ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կամ արտադրողի կողմից:

Եթե այդպիսի ընդհանուր քանակական ցուցանիշները հնարավոր չէ որոշել նշված եղանակով, ապա դրանք կարող են սահմանվել հիմք ընդունելով՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կամ արտադրողի կողմից՝ նույն կատեգորիայի ապրանքների արտադրության եւ արտահանող օտարերկրյա պետության շուկայում դրանց վաճառքի առնչությամբ ստացված եւ ծախսված փաստացի գումարները.

2) տվյալ ապրանքի այլ արտահանողների կամ արտադրողների կողմից՝ նույնանման ապրանքի արտադրության եւ արտահանող օտարերկրյա պետության շուկայում դրա վաճառքի առնչությամբ ստացված եւ ծախսված փաստացի գումարների կշռված միջինը.

3) որեւէ այլ մեթոդ՝ պայմանով, որ նման կերպով սահմանված շահույթի գումարը չի գերազանցում նույն կատեգորիայի ապրանքի այլ արտահանողների կամ արտադրողների կողմից՝ արտահանող օտարերկրյա պետության շուկայում դրա վաճառքից սովորաբար ստացվող շահույթը:

11. Այն դեպքում, երբ գնագոյն ներմուծումն իրականացվում է այն արտահանող օտարերկրյա պետությունից, որտեղ շուկայական գները կարգավորվում են անմիջապես պետության կողմից կամ առկա է արտաքին առեստրի պետական մենաշնորհ, ապրանքի սովորական արժեքը կարող է սահմանվել՝ հիմք ընդունելով համապատասխան օտարերկրյա պետությունում նույնանման ապրանքի գները կամ հաշվարկված արժեքը (որն ուսումնասիրության նպատակով համեմատելի է նշված արտահանող օտարերկրյա պետության հետ) կամ նույնանման ապրանքի՝ նման օտարերկրյա պետությունից այլ օտարերկրյա պետություններ՝ ներառյալ Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք մատակարարելու գները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ սույն կետի դրույթների համաձայն հնարավոր չէ սահմանել ապրանքի սովորական արժեքը, ապրանքի սովորական արժեքը կարող է սահմանվել՝ հիմք ընդունելով Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածքում նույնանման ապրանքի համար վճարված կամ վճարման ենթակա եւ շահույթի հիման վրա ճշգրտված գինը:

Հոդված 12

Ապրանքի արտահանման գնի սահմանումը

1. Ապրանքի արտահանման գինը սահմանվում է վերջինիս՝ ուսումնասիրության ընթացքում վաճառքի տվյալների հիման վրա:

2. Գնագոյում ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանման գնի մասին տվյալների բացակայության դեպքում, կամ եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում այդ ապրանքի արտահանման գնի մասին տեղեկությունների ճշգրտության առումով այն պատճառով, որ ապրանքի արտահանողը կամ ներմուծողը կապակցված անձինք են՝ այդ թվում երրորդ անձի հետ նրանցից յուրաքանչյուրի կապված լինելու պատճառով, կամ եթե այդ ապրանքի արտահանման գնի կապակցությամբ իրականացվում են սահմանափակող բնույթի գործողություններ՝ գաղտնի համաձայնության ձեռով, ապա վերջինիս արտահանման գինը կարող է հաշվարկվել՝ հիմք ընդունելով այն գինը, որով ներմուծված ապրանքն առաջին անգամ վերավաճառվում է անկախ գնորդին, կամ այլ եղանակով, որը կարող է որոշվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, եթե ներմուծված ապրանքը չի վերավաճառվում անկախ գնորդին կամ չի վերավաճառվում այնպիսի տեսքով, ինչպիսին այն ներմուծվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածք:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 13

Գնագող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի հաստատումը

1. Գնագող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը հաստատվում է՝ հիմք ընդունելով գնագող ներմուծման ծավալի վերլուծության արդյունքները, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների եւ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրողների վրա նման ներմուծման ազդեցությունը:

2. Սույն բաժնի նպատակով՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս ասելով ենթադրվում է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը, նման վնաս հասցնելու վտանգը կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական դանդաղումը:

3. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշվում է ուսումնասիրության ժամանակահատվածի համար վերջինիս անցկացման ընթացքում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվում նաեւ ուսումնասիրությունն սկսելու մասին դիմումի ներկայացման օրվան նախորդող երեք տարվա ընթացքում Կողմ հանդիսացող պետությունների շուկայում առկա միտումները:

4. Գնագող ներմուծման ծավալը վերլուծելիս, ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնագող ներմուծման զգալի աճ (բացարձակ ցուցանիշներով կամ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման ծավալի հետ համեմատած)

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների վրա գնագցող ներմուծման ազդեցությունը վերլուծելիս՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) արդյոք գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի գները բավականին ցածր են եղել Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գներից.

2) արդյոք գնագցող ներմուծումը հանգեցրել է Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների նվազեցման.

3) արդյոք գնագցող ներմուծումը զգալիորեն խոչընդոտել է Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների աճին, որը տեղի կունենար նման ներմուծման բացակայության դեպքում:

6. Եթե միաժամանակ իրականացվող ուսումնասիրությունների առարկան Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքի ներմուծումն է ավելի քան մեկ արտահանող օտարերկրյա պետությունից, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է գնահատել տվյալ ներմուծման ընդհանուր ազդեցությունը միայն այն դեպքում, երբ հաստատվում է, որ

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) յուրաքանչյուր արտահանող օտարերկրյա պետությունից ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման համար սահմանված գնագցման չափը գերազանցում է նվազագույն թույլատրելի գնագցման չափը, եւ տվյալ ապրանքի ներմուծման չափը յուրաքանչյուր արտահանող օտարերկրյա պետությունից աննշան չէ՝ սույն Համաձայնագրի 31-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն:

2) ապրանքի ներմուծման ընդհանուր ազդեցության գնահատումը հնարավոր է՝ ելնելով ներմուծվող ապրանքների միջեւ մրցակցության պայմաններից, ինչպես նաեւ ներմուծվող ապրանքի եւ Կողմ հանդիսացող պետություններում արտադրված նույնանման ապրանքի միջեւ մրցակցության պայմաններից:

7. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա գնագցող ներմուծման ազդեցության վերլուծությունը ենթադրում է Կողմ հանդիսացող

պետությունների տնտեսության ճյուղի վիճակի հետ կապված բոլոր տնտեսական գործոնների գնահատումը, այդ թվում՝

Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի տնտեսական վիճակի վերականգնման մակարդակը, դրա վրա անցյալում իրականացված գնագցող կամ լրավճարված ներմուծման ունեցած ազդեցությունից հետո.

արտադրության, ապրանքի վաճառքի, Կողմ հանդիսացող պետությունների շուկայում դրա մասնաբաժնի, արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամտի տեղի ունեցած կամ հնարավոր կրճատումը:

Կողմ հանդիսացող պետությունների շուկայում ապրանքի գների վրա ազդող գործոնները.

գնագցման չափը.

ապրանքի արտադրության աճի տեմպերի, ապրանքի պաշարների, զբաղվածության աստիճանի, աշխատավարձի, ներդրումներ ներգրավելու կարողության եւ ֆինանսական դրության վրա փաստացի կամ հնարավոր բացասական ազդեցությունը:

Ընդ որում, այս գործոններից ոչ մեկը կամ մի քանիսն ինքնին չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ գնագցող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի հաստատման համար:

8. Գնագցող ներմուծման եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի միջեւ պատճառահետեւանքային կապի առկայության մասին եզրահանգումը պետք է հիմնված լինի ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած գործին վերաբերող բոլոր ապացույցների եւ տեղեկությունների վերլուծության վրա:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը գնագցող ներմուծումից բացի վերլուծում է նաեւ ցանկացած այլ գործոն, որի հետեւանքով այդ նույն ժամանակահատվածում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին վնաս է հասցվում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այն գործոնները, որոնք կարող են համարվել որպես գործին առնչվող, ներառում են, մասնավորապես, գնագցման գներով չվաճառված ներմուծվող ապրանքի ծավալն ու գները, պահանջարկի կրճատումը կամ սպառողական վարքագծի փոփոխությունը, առետուրը սահմանափակող միջոցառումները, տեխնոլոգիական նվաճումները, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի արտադրողականությունը:

Այս գործոնների պատճառով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը չպետք է համարվի գնագցող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս:

10. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա գնագցող ներմուծման ազդեցությունը գնահատվում է Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրության շրջանակներում, եթե առկա տվյալներով հնարավոր է առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը՝ այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, նույնանման ապրանքի վաճառքը դրա արտադրողների կողմից եւ շահույթը:

Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա գնագցող ներմուծման ազդեցությունը Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա կարող է գնահատվել ապրանքների հնարավոր այն ամենանեղ խմբի կամ անվանացանկի արտադրության մասով, որոնք ներառում են նույնանման ապրանքը եւ որոնց մասին առկա են անհրաժեշտ տվյալներ:

11. Գնագցող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի հաստատման դեպքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի է առնում բոլոր առկա գործոնները, այդ թվում՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) գնագցող ներմուծման աճի տեմպերը, որոնք ցույց են տալիս նման ներմուծման հետագա աճի իրական հավանականությունը.

2) գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի մոտ արտահանման բավարար հնարավորությունների առկայությունը կամ դրանց ընդլայնման ակնհայտ անխուսափելիությունը, որը ցույց է տալիս այդ ապրանքի գնագցող ներմուծման

աճի իրական հնարավորությունը՝ հաշվի առնելով արտահանման հավելյալ ծավալներն սպառելու ունակ այլ արտահանող շուկաների առկայությունը.

3) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գների մակարդակը, եթե գների այդ մակարդակը կարող է հանգեցնել Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների նվազեցման կամ զսպման, ինչպես նաեւ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի պահանջարկի հետագա աճի.

4) արտահանողի մոտ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի պաշարների առկայություն:

12. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ սույն հոդվածի 11-րդ կետում նշված գործոնների վերլուծության արդյունքներով իրականացվող ուսումնասիրության ընթացքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է այն եզրակացության, որ գնագցող ներմուծումն անխուսափելիորեն շարունակվելու է եւ հակագնագցման միջոցի չկիրառման դեպքում այդ ներմուծումը նյութական վնաս կհասցնի Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 14

Ժամանակավոր հակագնագցման տուրքի սահմանումը

1. Եթե նախքան ուսումնասիրության ավարտն ստացված տեղեկությունները վկայում են գնագցող ներմուծման եւ դրա հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմնի՝ նախնական եզրակացություն պարունակող զեկույցի հիման վրա, Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է որոշում ժամանակավոր հակագնագցման տուրք սահմանելու միջոցով հակագնագցման միջոցի կիրառման մասին՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին՝ ուսումնասիրության անցկացման ընթացքում գնագցող ներմուծման հետեւանքով հասցվող վնասը կանխելու նպատակով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ժամանակավոր հակազնագցման տուրքը չի կարող սահմանվել ուսումնասիրությունն սկսելու օրվանից հետո 60 օրացուցային օրից ոչ շուտ:

3. Ժամանակավոր հակազնագցման տուրքի դրույքաչափը պետք է բավարար լինի Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար, սակայն չպետք է գերազանցի նախապես հաշվարկված գնագցման չափը:

4. Եթե ժամանակավոր հակազնագցման տուրքի դրույքաչափը հավասար է նախապես հաշվարկված գնագցման չափին, ապա ժամանակավոր հակազնագցման տուրքի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 4 ամիսը՝ բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ ժամկետը երկարաձգվում է մինչև 6 ամսով այն արտահանողների խնդրանքով, որոնց մասնաբաժինն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնագցող ներմուծման ծավալում, մեծ մասն է կազմում:

5. Եթե ժամանակավոր հակազնագցման տուրքի դրույքաչափը փոքր է նախապես հաշվարկված գնագցման չափից, ապա ժամանակավոր հակազնագցման տուրքի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 6 ամիսը՝ բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ ժամկետը երկարաձգվում է մինչև 9 ամսով այն արտահանողների խնդրանքով, որոնց մասնաբաժինն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնագցող ներմուծման ծավալում, մեծ մասն է կազմում:

6. Եթե ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ հակազնագցման միջոց սահմանելու համար հիմքերը բացակայում են, ապա ժամանակավոր հակազնագցման տուրքի գումարները ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով ընդունվել է հակազնագցման միջոցի կիրառման մասին որոշում, ժամանակավոր հակազնագցման տուրքի գումարները, սկսած ուսումնասիրության արդյունքներով ընդունված հակազնագցման միջոցի կիրառման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերի դրույթները:

(7-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

8. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվել սահմանել հակազնագցման տուրքի՝ ժամանակավոր հակազնագցման տուրքի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափ, ժամանակավոր գնագցման տուրքի գումարները, որոնք համապատասխանում են հակազնագցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հակազնագցման տուրքի գումարին, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

Ժամանակավոր գնագցման տուրքի գումարները, որոնք գերազանցում են հակազնագցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հակազնագցման տուրքի գումարը, ենթակա են վերադարձման վճարողին սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(8-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվել սահմանել հակազնագցման տուրքի ավելի բարձր դրույքաչափ, քան ժամանակավոր հակազնագցման տուրքի դրույքաչափն է, հակազնագցման տուրքի եւ ժամանակավոր հակազնագցման տուրքի գումարների միջեւ տարբերությունը չի գանձվում:

(9-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Ժամանակավոր հակազնագցման տուրքը կիրառվում է՝ ուսումնասիրությունը միաժամանակ շարունակվելու պայմանով:

(10-րդ կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Հոդված 15

Ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կողմից գնային պարտավորությունների ստանձնումը

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1. Ուսումնասիրությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ առանց ժամանակավոր հակազնագցման տուրքի կամ հակազնագցման տուրքի սահմանման, այն դեպքում, երբ վերջինս ստանում է գրավոր

տեղեկություններ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կողմից գնային պարտավորություններ ստանձնելու մասին՝ այդ ապրանքի գները վերանայելու կամ Մաքսային միության միասնական մաքսային տարածք այդ ապրանքի՝ վերջինիս սովորական գնից ցածր գներով արտահանումը դադարեցնելու առումով (Կողմ հանդիսացող պետություններում արտահանողի հետ կապված անձանց առկայության դեպքում, անհրաժեշտ է նաեւ տվյալ անձանց վերոնշյալ պարտավորություններին կողմ լինելու մասին հայտարարությունները), եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը, հանգի այն եզրակացության, որ նման պարտավորությունների ստանձնումը կվերացնի գնագող ներմուծման հետեւանքով հասցված վնասը, եւ Մաքսային միության հանձնաժողովն ընդունի որոշում դրանց հաստատման մասին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այս պարտավորությունների համաձայն ապրանքի գների մակարդակը պետք է ավելի բարձր չլինի, քան անհրաժեշտ է գնագցման չափը վերացնելու համար:

Ապրանքի գնի բարձրացումը կարող է գնագցման չափից ավելի պակաս լինել: Եթե նման բարձրացումը բավական է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

2. Մաքսային միության հանձնաժողովը չի ընդունում գնային պարտավորությունները հաստատելու մասին որոշում այնքան ժամանակ, քանի դեռ ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի գալիս գնագող ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին եզրահանգման:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Մաքսային միության հանձնաժողովը չի ընդունում գնային պարտավորությունները հաստատելու մասին որոշում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է այն եզրակացության, որ դրանց հաստատումն անընդունելի է՝ ապրանքի մեծ թվով իրական կամ հավանական արտահանողների առկայության կամ այլ պատճառներով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հնարավորության դեպքում հայտնում է արտահանողներին այն պատճառների մասին, որոնց հիման վրա նրանց գնային

պարտավորությունների հաստատումը համարվել է անընդունելի, եւ նրանց հնարավորություն է տալիս դրա հետ կապված մեկնաբանություններ անել:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3-1. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հարցում է ուղարկում գնային պարտավորություններ ստանձնած բոլոր արտահանողներին, նրանց կողմից՝ իրենց ոչ գաղտնի տարբերակը ներկայացնելու համար, որպեսզի համապատասխան հարցում ստանալու դեպքում հնարավորություն ունենա ներկայացնելու այն շահագրգիռ անձանց:

(3-1 կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է առաջարկել արտահանողներին ստանձնել գնային պարտավորություններ, սակայն չի կարող պահանջել դրանց ընդունումը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Մաքսային միության կողմից գնային պարտավորությունները հաստատվելու դեպքում, հակազնագցման ուսումնասիրությունը կարող է շարունակվել ապրանքի արտահանողի խնդրանքով կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի որոշմամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Եթե ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է գնագցող ներմուծման կամ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի բացակայության մասին եզրակացության, գնային պարտավորություններ ստանձնած արտահանողն ինքնաբերաբար ազատվում է նման պարտավորություններից՝ բացառությամբ այն դեպքի, երբ նշված եզրակացությունը գլխավորապես նման պարտավորությունների առկայության արդյունքն է: Այն դեպքում, եթե կայացրած եզրակացությունը գլխավորապես գնային պարտավորությունների առկայության արդյունքն է, Մաքսային միության հանձնաժողովը կարող է որոշում կայացնել այն մասին, որ նման պարտավորությունները պետք է ուժի մեջ մնան անհրաժեշտ ժամկետով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է գնագցող ներմուծման եւ դրանով պայմանավորված

Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին եզրակացության, արտահանողի կողմից ստանձնած գնային պարտավորությունները շարունակում են գործել՝ դրանց պայմանների եւ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի արտահանողից պահանջել արտահանողի կողմից գնային պարտավորությունների կատարմանը վերաբերող տեղեկություններ, ինչպես նաեւ նրա համաձայնությունը՝ այդ տեղեկություններն ստուգելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամկետում պահանջվող տեղեկությունները չներկայացնելը, ինչպես նաեւ այդ տեղեկություններն ստուգելու համար համաձայնություն չտալը համարվում են արտահանողի կողմից ստանձնած գնային պարտավորությունների խախտում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

8. Եթե արտահանողը խախտում կամ չեղյալ է հայտարարում գնային պարտավորությունները, Մաքսային միության հանձնաժողովը կարող է հակազնագցման միջոցի կիրառման մասին որոշում ընդունել՝ ժամանակավոր հակազնագցման տուրք սահմանելու միջոցով այն դեպքում, երբ ուսումնասիրությունը դեռ չի ավարտվել, կամ հակազնագցման տուրք սահմանելու միջոցով, եթե ուսումնասիրության վերջնական արդյունքներով հաստատվում է դրա սահմանման համար հիմքերի առկայությունը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Արտահանողի կողմից՝ իր ստանձնած պարտավորությունները խախտելու դեպքում, վերջինիս հնարավորություն է տրվում այդ խախտման հետ կապված մեկնաբանություններ անել:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Գնային պարտավորությունների հաստատման մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշման մեջ պետք է սահմանված լինի ժամանակավոր հակազնագցման

տուրքի կամ հակազնագցման տուրքի դրույքաչափը, որը կարող է սահմանվել՝ սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն:

(9-րդ կետին ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Հոդված 16

Հակազնագցման տուրքի սահմանումը եւ կիրառում

1. Հակազնագցման տուրքը կիրառվում է բոլոր արտահանողների կողմից մատակարարվող եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնող գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի նկատմամբ՝ բացառությամբ այն ապրանքի, որը մատակարարվում է այն արտահանողների կողմից, որոնց գնային պարտավորությունները հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի կողմից սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի դրույթների համաձայն:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Հակազնագցման տուրքի չափը պետք է բավարար լինի Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար, սակայն չպետք է գերազանցի հաշվարկված գնագցման չափը:

Մաքսային միության հանձնաժողովը կարող է հաշվարկված գնագցման չափից ավելի փոքր չափով հակազնագցման տուրք սահմանելու մասին որոշում ընդունել այն դեպքում, երբ տվյալ չափը բավարար է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Մաքսային միության հանձնաժողովը սահմանում է հակազնագցման տուրքի առանձին դրույքաչափ այն ապրանքի համար, որը մատակարարվում է գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի յուրաքանչյուր այն արտահանողի կամ արտադրողի կողմից, որի համար հաշվարկվել է գնագցման առանձին չափ:

(3-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հակազնագցման տուրքի առանձին դրույքաչափ սահմանելուց բացի՝ Մաքսային միության հանձնաժողովը, ուսումնասիրության ընթացքում հաշվարկված ամենաբարձր գնագցման չափի հիման վրա, սահմանում է հակազնագցման տուրքի ընդհանուր դրույքաչափ այն ապրանքի համար, որը մատակարարվում է օտարերկրյա պետությունից մյուս բոլոր այն արտահանողների կամ արտադրողների կողմից, որոնց համար գնագցման չափ չի հաշվարկվել:

(4-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 17

Հակազնագցման միջոցի գործողության ժամկետը եւ դրա վերանայումը

1. Հակազնագցման միջոցը կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ այնպիսի չափով եւ ժամկետով, որոնք անհրաժեշտ են գնագցող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Հակազնագցման միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 5 տարին՝ սկսած այդ միջոցի կիրառումն սկսելու օրվանից կամ կրկնակի ուսումնասիրությունն ավարտելու օրվանից, որն անցկացվում էր փոփոխված հանգամանքների հետեւանքով եւ միաժամանակ վերաբերում էր գնագցող ներմուծման եւ դրա հետ կապված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի վերլուծությանը, կամ հակազնագցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով:

3. Հակազնագցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է սույն Համաձայնագրի 29-րդ հոդվածի դրույթների համաձայն ներկայացված գրավոր դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հակազնագցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է այն դեպքում, երբ դիմումի մեջ առկա են տվյալներ այն

մասին, որ գնագոյղ ներմուծումը կարող է վերսկսվել կամ շարունակվել եւ հակազնագցման միջոցի գործողության դադարեցման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին կարող է վնաս հասցվել:

Հակազնագցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացվում է ոչ ուշ, քան հակազնագցման միջոցի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ:

Կրկնակի ուսումնասիրությունը պետք է սկսվի նախքան հակազնագցման միջոցի գործողության ժամկետի ավարտը եւ ավարտվի վերջինս սկսելու օրվանից սկսած 12 ամսվա ընթացքում:

Նախքան սույն կետի դրույթների համաձայն անցկացվող կրկնակի ուսումնասիրության ավարտը, հակազնագցման միջոցի կիրառումը երկարաձգվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ: Այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվում է համապատասխան հակազնագցման միջոցի կիրառումը, ժամանակավոր հակազնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարվում են հակազնագցման տուրքեր հակազնագցման տուրքերի այն դրույթաչափով, որը սահմանվել է հակազնագցման միջոցի կիրառման առնչությամբ, որի գործողության ժամկետը երկարաձգվում է կրկնակի ուսումնասիրության անցկացման հետեւանքով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ հակազնագցման միջոցի գործողության ժամկետի սպառման հետեւանքով անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ հակազնագցման միջոցի կիրառման համար հիմքերը բացակայում են, հակազնագցման տուրքի գումարները, որոնք գանձվում են ժամանակավոր հակազնագցման տուրքի գանձման համար սահմանված կարգով այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվել է հակազնագցման միջոցի կիրառումը, ենթակա են վերադարձման վճարողին սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հակազնագցման միջոցի գործողությունը երկարաձգվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից այն դեպքում, երբ հակազնագցման միջոցի գործողության ժամկետի սպառման հետեւանքով անցկացված կրկնակի ուսումնասիրության

արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ առկա է գնագոյող ներմուծման վերսկսման կամ շարունակման եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնելու հավանականություն: Հակագնագցման միջոցի երկարաձգման մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հակագնագցման տուրքերի գումարները, որոնք գանձվում են ժամանակավոր հակագնագցման տուրքի գանձման համար սահմանված կարգով այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվել է հակագնագցման միջոցի կիրառումը, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումով այն դեպքում, երբ հակագնագցման միջոցի սահմանումից անցել է առնվազն մեկ տարի, կարող է անցկացվել կրկնակի ուսումնասիրություն փոփոխվող հանգամանքների կապակցությամբ հակագնագցման միջոցի կիրառումը շարունակելու եւ (կամ) դրա վերանայման՝ ներառյալ հակագնագցման տուրքի առանձին դրույքաչափի վերանայման նպատակահարմարությունը որոշելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ելնելով նշված կրկնակի ուսումնասիրության անցկացման մասին դիմումի ներկայացման նպատակից՝ նման դիմումը պետք է ներառի ապացույցներ այն մասին, որ փոփոխված հանգամանքների հետեւանքով՝

չի պահանջվում շարունակել հակագնագցման միջոցի կիրառումը՝ գնագոյող ներմուծմանը հակազդելու եւ գնագոյող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու նպատակով, կամ

հակագնագցման միջոցի առկա չափը գերազանցում է այն չափը, որն անհրաժեշտ է գնագոյող ներմուծմանը հակազդելու եւ գնագոյող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու նպատակով, կամ

առկա հակագնագցման միջոցը բավարար չէ գնագոյող ներմուծմանը հակազդելու եւ գնագոյող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

Սույն կետի համաձայն անցկացվող կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի վերջինիս սկսելու օրվանից հետո 12 ամսվա ընթացքում:

5. Կրկնակի ուսումնասիրությունը կարող է նաեւ անցկացվել այն արտահանողի կամ արտադրողի համար առանձին գնագցման չափ սահմանելու նպատակով, որն ուսումնասիրության ընթացքում չէր իրականացնում գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի մատակարարում:

Նման կրկնակի ուսումնասիրություն կարող է սկսվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից այն դեպքում, երբ նշված արտահանողը կամ արտադրողը վերջինիս անցկացման մասին դիմում է ներկայացրել, որը պարունակում է ապացույցներ այն մասին, որ ապրանքի արտահանողը կամ արտադրողը կապված չէ այն արտահանողների կամ արտադրողների հետ, որոնց նկատմամբ կիրառվում է հակագնագցման միջոցը, եւ որ այդ արտահանողը կամ արտադրողն իրականացնում է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարում Մաքսային միության միասնական մաքսային տարածք կամ կապված է Մաքսային միության միասնական մաքսային տարածք նման ապրանքի զգալի ծավալների մատակարարման պայմանագրային պարտավորություններով, որոնց դադարեցումը կամ չեղարկումն ապրանքի այդ արտահանողի կամ արտադրողի համար առաջացնում է զգալի կորուստներ եւ տուգանային սանկցիաներ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Կրկնակի ուսումնասիրության անցկացման ընթացքում արտահանողի կամ արտադրողի համար գնագցման առանձին չափ սահմանելու նպատակով այդ արտահանողի կամ արտադրողի կողմից Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման նկատմամբ հակագնագցման միջոց չի կիրառվում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Սույն կետով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է ամենահինարավոր կարճ ժամկետում, եւ ցանկացած պարագայում այդ ժամկետը չի կարող գերազանցել 12 ամիս ժամկետը:

Համապատասխան կրկնակի ուսումնասիրությունն սկսելուց հետո Մաքսային միության հանձնաժողովը կարող է միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար տվյալ

արտահանողի կամ արտադրողի կողմից իրականացվող՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարումից գոյացող հակազնագցման տուրքը գանձելու հնարավորությունը, մասնավորապես, տվյալ տուրքերի վճարման հետ կապված պարտավորությունների ստանձման տեսքով:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

6. Սույն Համաձայնագրի V բաժնի դրույթները, որոնք վերաբերում են ապացույցների ներկայացմանը եւ հակազնագցման ուսումնասիրության անցկացմանը, կիրառվում են սույն հոդվածով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

7. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի համաձայն արտահանողի կողմից ընդունված պարտավորությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

Հոդված 18

Հակազնագցման միջոցի շրջանցման հաստատումը

1. Սույն հոդվածի նպատակով՝ հակազնագցման միջոցի շրջանցում ասելով հասկացվում է ապրանքի մատակարարման եղանակի փոփոխում՝ հակազնագցման տուրք վճարելուց կամ արտահանողի կողմից ստանձնած գնային պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Հակազնագցման միջոցի շրջանցումը հաստատելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված դիմումը պետք է պարունակի հետեւյալ ապացույցները՝

1) հակազնագցման միջոցի շրջանցումը.

2) հակազնագցման միջոցի ազդեցության չեզոքացումը՝ վերջինիս շրջանցման հետեւանքով, ինչպես նաեւ այդ գործոնի ազդեցությունն արտադրության ծավալների եւ (կամ) նույնանման ապրանքի վաճառքի եւ (կամ) գների վրա:

3) հակազնագցման միջոցի շրջանցման հետեւանքով ապրանքի (այդ ապրանքի բաղադրատարրերի եւ (կամ) ածանցյալների) գնագոյ ներմուծման առկայություն: Ընդ որում որպէս ապրանքի, դրա բաղկացուցիչ մասերի կամ ածանցյալների սովորական արժեք ընդունվում է դրանց՝ ուսումնասիրության ընթացքում հաստատված այն սովորական արժեքը, որը հաստատվել է ուսումնասիրության անցկացման ընթացքում, որի արդյունքներով Մաքսային միության հանձնաժողովը սահմանել է հակազնագցման տուրք՝ հաշվի առնելով համադրման նպատակով կատարված համապատասխան ճշգրտումները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Հակազնագցման միջոցի շրջանցումը հաստատելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի՝ վերջինս սկսելու օրվանից հետո 9 ամսվա ընթացքում:

5. Սույն հոդվածի համաձայն անցկացվող կրկնակի ուսումնասիրության ժամանակահատվածի համար, Մաքսային միության հանձնաժողովը կարող է ժամանակավոր հակազնագցման տուրքերի համար սահմանված կարգով գանձվող հակազնագցման տուրք սահմանել գնագոյ ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի այն բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների համար, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանող օտարերկրյա պետությունից, ինչպէս նաեւ գնագոյ ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի, եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների համար, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք այլ արտահանող օտարերկրյա պետությունից:

(5-րդ կէտրը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Այն դեպքում, երբ սույն հոդվածի համաձայն անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի հաստատում հակազնագցման միջոցի շրջանցում, հակազնագցման տուրքի գումարները, որոնք վճարվել են սույն հոդվածի համաձայն եւ ժամանակավոր հակազնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով, ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կէտում սահմանված կարգով:

(6-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Այն դեպքում, երբ սույն հոդվածի համաձայն անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է սույն Համաձայնագրի համաձայն կիրառվող հակազնագցման միջոցի շրջանցում, ապա հակազնագցման միջոցը Մաքսային միության հանձնաժողովի կողմից կարող է տարածվել ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների վրա, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանող օտարերկրյա պետությունից, ինչպես նաեւ գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի, եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների վրա, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք այլ արտահանող օտարերկրյա պետությունից: Սույն կետում նշված հակազնագցման միջոց սահմանելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, ժամանակավոր հակազնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարված հակազնագցման տուրքերի գումարները ենթակա են հաշվեգրման եւ բաշխման՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

(7-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

IV. Փոխհատուցման միջոցները

Հոդված 19

Փոխհատուցման միջոցների կիրառման ընդհանուր սկզբունքները

Փոխհատուցման միջոցը կարող է կիրառվել ներմուծվող այն ապրանքի նկատմամբ, որի արտադրության, արտահանման կամ փոխադրման ընթացքում կիրառվել է արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճար, այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից անցկացված ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է, որ այդ ապրանքի ներմուծումը Մաքսային միության միասնական մաքսային տարածք նյութական վնաս է հասցնում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին, ստեղծում է նման վնաս հասցնելու վտանգ կամ

էապես դանդաղեցնում է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծումը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 20

Լրավճարի սահմանումը

Լրավճար ասելով հասկացվում է՝

1) ցանկացած ձեռով արտահայտված եկամտային կամ գնային օժանդակություն, որը լրավճար ստացողին տալիս է հավելյալ արտոնություններ, որի արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղի է ունենում արտահանող օտարերկրյա պետությունից ապրանքի արտահանման ավելացում կամ այդ օտարերկրյա պետություն նույնանման ապրանքի ներմուծման կրճատում:

2) լրավճար տրամադրող մարմնի կողմից ցույց տրված ֆինանսական օժանդակություն, որը լրավճար ստացողին տալիս է հավելյալ արտոնություններ, եւ որն արտահանող օտարերկրյա պետության տարածքում արտահայտվում է՝

դրամական միջոցների ուղղակի փոխանցման (օրինակ՝ դրամաշնորհների, վարկերի տրամադրման եւ բաժնետոմսերի գնման) կամ նման միջոցներ փոխանցելու պարտավորությունների ձեռով.

միջոցներ դուրս գրելու կամ միջոցների գանձումից լրիվ կամ մասնակիորեն հրաժարվելու ձեռով, որոնք պետք է մուտք արվեին արտահանող օտարերկրյա պետության եկամուտ՝ ներառյալ հարկային վարկերի տրամադրման միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ արտահանվող ապրանքն ազատվում է այն հարկերից եւ տուրքերից, որոնք գանձվում են ներքին սպառման համար նախատեսված նույնանման ապրանքի համար, կամ տվյալ հարկերի կամ տուրքերի նվազեցման կամ վերադարձման ձեռով՝ փաստացի վճարված գումարները չգերազանցող չափով,

Ապրանքների կամ ծառայությունների արտոնյալ պայմաններով կամ անհատույց տրամադրելու ձեռով՝ բացառությամբ այն ապրանքների կամ ծառայությունների, որոնք նախատեսված են ընդհանուր ենթակառուցվածքի պահպանման եւ զարգացման համար,

այսինքն՝ այն ենթակառուցի, որը կապված չէ կոնկրետ արտադրողի եւ (կամ) արտահանողի հետ.

ապրանքների՝ արտոնյալ պայմաններով ձեռք բերման ձեւով:

Հոդված 21

Արտահանող օտարերկրյա պետության լրավճարը որպես հատուկ լրավճար որակելու սկզբունքները

1. Արտահանող օտարերկրյա պետության լրավճարը համարվում է հատուկ լրավճար այն դեպքում, եթե լրավճար տրամադրող մարմնի կողմից կամ արտահանող օտարերկրյա պետության օրենսդրությամբ լրավճարի օգտագործումը թույլատրվում է միայն առանձին կազմակերպություններին:

2. Սույն հոդվածում առանձին կազմակերպություններ ասելով ենթադրվում է կոնկրետ արտադրողը եւ (կամ) արտահանողը, ինչպես նաեւ արտահանող օտարերկրյա պետության տնտեսության կոնկրետ ճյուղը կամ արտադրողների եւ (կամ) արտահանողների խումբը կամ արտահանող օտարերկրյա պետության տնտեսության ճյուղերի խումբը (միություն, միավորում):

3. Լրավճարը համարվում է հատուկ այն դեպքում, երբ լրավճարը հասանելի է լրավճար տրամադրող մարմնի իրավասությանը ենթակա սահմանազատված աշխարհագրական տարածքում գտնվող հատկորոշված կազմակերպությունների համար:

4. Լրավճարը չի համարվում հատուկ, եթե արտահանող օտարերկրյա պետության օրենսդրությամբ կամ լրավճարը տրամադրող մարմնի կողմից սահմանվում են լրավճար ստանալու համար անվերապահ իրավունքը եւ դրա չափը որոշող ընդհանուր անաչառ չափանիշներ կամ պայմաններ (այդ թվում նաեւ ելնելով արտադրանքի արտադրությամբ զբաղվող աշխատողների քանակից կամ արտադրանքի բացթողման ծավալից), որոնք խիստ պահպանվում են:

5. Ցանկացած դեպքում արտահանող օտարերկրյա պետության լրավճարը համարվում է հատուկ լրավճար, եթե այդ լրավճարի տրամադրման հետ մեկտեղ՝

1) սահմանափակվում է այն կազմակերպությունների թիվը, որոնց համար հասանելի է լրավճարը.

2) հատկորոշված կազմակերպություններն օգտագործում են լրավճարի գերակշիռ մասը.

3) հատկորոշված կազմակերպություններին անհամաչափորեն տրամադրվում են մեծ գումարներ.

4) Լրավճար տրամադրող մարմինն ընտրում է հատկորոշված կազմակերպություններին լրավճարի տրամադրման արտոնյալ (գերադասելի) եղանակ:

6. Արտահանող օտարերկրյա պետության ցանկացած լրավճար համարվում է հատուկ, եթե՝

1) լրավճարը՝ ինքն առանձին կամ որպես մի շարք պայմաններից մեկը, արտահանող օտարերկրյա պետության օրենսդրությամբ կամ փաստացիորեն կապված է ապրանքի արտահանման հետ: Լրավճարը համարվում է փաստացիորեն ապրանքի արտահանման հետ կապված, եթե լրավճարի տրամադրումը, օրենքով արտահանման հետ կապված չլինելով հանդերձ, փաստացիորեն կապված է իրական կամ նախատեսվող արտահանման կամ արտահանումից ստացվող հասույթների հետ: Այս առումով, այն փաստը, որ լրավճարը տրամադրվում է արտահանող կազմակերպություններին, չպետք է միայն այդ պատճառով համարվի ապրանքի արտահանման հետ կապված լրավճար.

2) լրավճարը՝ արտահանող օտարերկրյա պետության օրենսդրության համաձայն կամ փաստացիորեն ինքն առանձին կամ որպես մի շարք պայմաններից մեկը, կապված է, ներմուծված ապրանքների փոխարեն, արտահանող օտարերկրյա պետությունում արտադրված ապրանքների օգտագործման հետ:

7. Արտահանող օտարերկրյա պետության լրավճարը որպես հատուկ լրավճար որակելու մասին իրավասու մարմնի որոշումը պետք է հիմնված լինի ապացույցների վրա:

Հոդված 22

Հատուկ լրավճարի չափի որոշման սկզբունքները

1. Հատուկ լրավճարի չափը որոշվում է նման լրավճար ստացողին հասած օգուտի չափի հիման վրա:

2. Լրավճար ստացողին հասած օգուտի չափը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

1) լրավճար տրամադրող մարմնի՝ կազմակերպության կապիտալում մասնակցությունը չի համարվում օգուտի տրամադրում, եթե այդպիսի մասնակցությունը չի կարող գնահատվել որպես արտահանման երկրի տարածքում ընդունված սովորական ներդրումային գործելակերպի հետ անհամատեղելի մասնակցություն (ներառյալ՝ ռիսկային կապիտալի տրամադրումը):

2) լրավճար տրամադրող մարմնի տրամադրած վարկը չի համարվում օգուտի տրամադրում, եթե պետությունից ստացվող վարկերի դիմաց վարկ ստացող կազմակերպության կողմից կատարվող վճարի չափը չի տարբերվում այն վճարի չափից, որը կազմակերպությունը կվճարեր արտահանող օտարերկրյա պետության վարկային շուկայում համարժեք առետրային վարկի ձեռքբերման դեպքում: Հակառակ դեպքում օգուտի չափը հավասար է նշված երկու վճարների չափերի տարբերությանը:

3) Լրավճար տրամադրող մարմինը վարկային երաշխիքը չի համարում օգուտի տրամադրում, եթե լրավճար տրամադրող մարմնի կողմից երաշխավորված վարկի դիմաց երաշխիք ստացող կազմակերպության կողմից կատարվող վճարի չափը չի տարբերվում այն վճարի չափից, որն այն կվճարեր համարժեք առետրային վարկի ձեռքբերման դեպքում՝ առանց պետական երաշխիքի: Հակառակ դեպքում օգուտի չափը հավասար է նշված երկու գումարների չափերի տարբերությանը՝ միջնորդավճարների տարբերությամբ ճշգրտված:

4) լրավճար տրամադրող մարմնի կողմից ապրանքների կամ ծառայությունների տրամադրումը կամ ապրանքների գնումը չի համարվում օգուտի տրամադրում՝ բացառությամբ, եթե ապրանքներն ու ծառայությունները տրամադրված չեն համարժեքից ավելի փոքր վճարման դիմաց, կամ գնումը կատարված չէ համարժեքից ավելի մեծ վճարման դիմաց: Վճարման համարժեքությունը որոշվում է՝ ելնելով տվյալ ապրանքների կամ ծառայությունների գնման կամ վաճառքի համար արտահանող օտարերկրյա

պետության շուկայում առկա պայմաններից, ներառյալ՝ գինը, որակը, մատչելիությունը, շուկայում իրացվելիությունը, տեղափոխման հարցերը եւ գնման կամ վաճառքի հետ կապված այլ պայմաններ:

Հոդված 23

Գնագող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի հաստատումը

1. Լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշվում է՝ հիմք ընդունելով լրավճարված ներմուծման ծավալի վերլուծության, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների եւ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրողների վրա լրավճարված ներմուծման ազդեցության վերլուծության արդյունքները:

2. Սույն բաժնի նպատակով՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղ ասելով ենթադրվում է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը, նման վնաս հասցնելու վտանգը կամ տնտեսության ճյուղի ստեղծման էական դանդաղումը:

2-1. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշվում է ուսումնասիրության ժամանակահատվածի համար՝ վերջինիս անցկացման ընթացքում:

(2-1 կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

3. Լրավճարված ներմուծումը վերլուծելիս ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, թե արդյոք տեղի է ունեցել լրավճարված ներմուծման զգալի աճ (բացարձակ ցուցանիշներով կամ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման հետ համեմատած):

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Եթե միաժամանակ իրականացվող ուսումնասիրությունների առարկան Մաքսային միության միասնական մաքսային տարածք որեւէ ապրանքի լրավճարված ներմուծումն է

ավելի քան մեկ արտահանող օտարերկրյա պետությունից, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է գնահատել տվյալ ներմուծման ընդհանուր ազդեցությունը միայն այն դեպքում, երբ հաստատվում է, որ

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) տվյալ ապրանքի համար լրավճարի չափը յուրաքանչյուր արտահանող օտարերկրյա պետությունում կազմում է վերջինիս արժեքի ավելի, քան 1 տոկոսը, իսկ լրավճարված ներմուծման ծավալը յուրաքանչյուր արտահանող օտարերկրյա պետությունից աննշան չէ՝ սույն Համաձայնագրի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ազդեցության գնահատումը հնարավոր է՝ ելնելով ներմուծվող ապրանքների միջեւ մրցակցության պայմաններից, ինչպես նաեւ ներմուծվող ապրանքի եւ Կողմ հանդիսացող պետություններում արտադրված նույնանման ապրանքի միջեւ մրցակցության պայմաններից:

5. Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների վրա լրավճարված ներմուծման ազդեցությունը վերլուծելիս՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) արդյոք լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի գները բավականին ցածր են եղել Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գներից.

2) արդյոք լրավճարված ներմուծումը հանգեցրել է Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների նվազեցման.

3) արդյոք լրավճարված ներմուծումը զգալիորեն խոչընդոտել է Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների աճին, որը տեղի կունենար նման ներմուծման բացակայության դեպքում:

6. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա լրավճարված ներմուծման ազդեցության վերլուծությունը ենթադրում է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վիճակի հետ կապված տնտեսական գործոնների գնահատումը, այդ թվում՝

1) արտադրության, ապրանքի վաճառքի, Կողմ հանդիսացող պետությունների շուկայում ապրանքի մասնաբաժնի, արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամտի տեղի ունեցած կամ մոտ ապագայում հնարավոր կրճատումը.

2) Կողմ հանդիսացող պետությունների շուկայում ապրանքի գների վրա ազդող գործոնները.

3) գնային հոսքերի տեղաշարժման, ապրանքի պաշարների, զբաղվածության աստիճանի, աշխատավարձի, արտադրության աճի տեմպերի եւ ներդրումներ ներգրավելու կարողության վրա տեղի ունեցած կամ ապագայում հնարավոր բացասական ազդեցությունը:

7. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա լրավճարված ներմուծման ազդեցությունը գնահատվում է Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրության շրջանակներում, եթե առկա տվյալներով հնարավոր է առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը՝ այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, նույնանման ապրանքի վաճառքը դրա արտադրողների կողմից եւ շահույթը:

Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա լրավճարված ներմուծման ազդեցությունը Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա կարող է գնահատվել ապրանքների հնարավոր այն ամենանեղ խմբի կամ անվանացանկի արտադրության մասով, որոնք ներառում են նույնանման ապրանքը եւ որոնց մասին առկա են անհրաժեշտ տվյալներ: Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա գնագցող ներմուծման ազդեցությունը Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վրա կարող է գնահատվել ապրանքների հնարավոր այն ամենանեղ խմբի կամ անվանացանկի արտադրության մասով, որոնք ներառում են նույնանման ապրանքը եւ որոնց մասին առկա են անհրաժեշտ տվյալներ:

8. Լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի հաստատման դեպքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի է առնում բոլոր առկա գործոնները, այդ թվում՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) լրավճարի կամ լրավճարների բնույթը, չափը եւ առեւտրի վրա դրանց հնարավոր ազդեցությունը.

2) լրավճարված ներմուծման աճի տեմպերը, որոնք ցույց են տալիս նման ներմուծման հետագա աճի իրական հավանականությունը.

3) գնագոյ Ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի մոտ արտահանման բավարար հնարավորությունների առկայությունը կամ դրանց ընդլայնման ակնհայտ անխուսափելիությունը, որը ցույց է տալիս այդ ապրանքի լրավճարված ներմուծման աճի իրական հնարավորությունը՝ հաշվի առնելով արտահանման հավելյալ ծավալներն սպառելու ունակ այլ արտահանող շուկաների առկայությունը.

4) լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի գների մակարդակը, եթե գների այդ մակարդակը կարող է հանգեցնել Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների նվազեցման կամ աճի զսպման, ինչպես նաեւ լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի պահանջարկի հետագա աճի.

5) արտահանողի մոտ լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի պաշարները:

9. Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ սույն հոդվածի 8-րդ կետում նշված գործոնների վերլուծության արդյունքներով իրականացվող ուսումնասիրության ընթացքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է այն եզրակացության, որ լրավճարված ներմուծումն անխուսափելիորեն շարունակվելու է եւ փոխհատուցման միջոցի չկիրառման դեպքում այդ ներմուծումը նյութական վնաս կհասցնի Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Լրավճարված ներմուծման եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի միջեւ պատճառահետեանքային կապի առկայության հաստատումը պետք է հիմնված լինի ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած գործին վերաբերող բոլոր ապացույցների եւ տեղեկությունների վերլուծության վրա:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

11. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը լրավճարված ներմուծումից բացի վերլուծում է այլ այն գործոնները, որոնց հետեւանքով այդ նույն ժամանակահատվածում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին վնաս է հասցվում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նշված վնասը չպետք է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից որակվի որպես լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 24

Ժամանակավոր փոխհատուցման տուրքի սահմանումը

1. Եթե նախքան ուսումնասիրության ավարտն ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ստացված տեղեկությունները վկայում են լրավճարված ներմուծման եւ դրա հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմնի՝ նախնական եզրակացություն պարունակող զեկույցի հիման վրա, Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է որոշում ժամանակավոր մինչեւ 4 ամիս ժամկետով փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով փոխհատուցման միջոցի կիրառման մասին՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին՝ ուսումնասիրության անցկացման ընթացքում լրավճարված ներմուծման հետեւանքով հասցվող վնասը կանխելու նպատակով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ժամանակավոր փոխհատուցման տուրք չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ուսումնասիրությունն սկսելու օրվանից 60 օր հետո:

3. Ժամանակավոր փոխհատուցման տուրքը սահմանվում է արտահանող օտարերկրյա պետության լրավճարված եւ արտահանվող ապրանքի մեկ միավորի համար հատուկ լրավճարի՝ նախապես հաշվարկված մեծությանը հավասար չափով:

4. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով հաստատվում է, որ փոխհատուցման միջոց սահմանելու համար հիմքերը բացակայում են, փոխհատուցման տուրքի գումարները պետք է վերադարձվեն վճարողին սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով ընդունվել է փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշում, ժամանակավոր փոխհատուցման տուրքի գումարները, սկսած ուսումնասիրության արդյունքներով ընդունված փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերի դրույթները:

(5-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվել սահմանել փոխհատուցման տուրքի՝ ժամանակավոր փոխհատուցման տուրքի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափ, ժամանակավոր փոխհատուցման տուրքի գումարները, որոնք համապատասխանում են փոխհատուցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված փոխհատուցման տուրքի գումարին, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

Ժամանակավոր փոխհատուցման տուրքի գումարները, որոնք գերազանցում են փոխհատուցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված փոխհատուցման տուրքի գումարը, ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(6-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվել սահմանել փոխհատուցման տուրքի ավելի բարձր դրույքաչափ, քան ժամանակավոր փոխհատուցման տուրքի դրույքաչափն է, փոխհատուցման տուրքի եւ ժամանակավոր փոխհատուցման տուրքի գումարների միջեւ տարբերությունը չի գանձվում:

(7-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

8. Ժամանակավոր փոխհատուցման տուրքը կիրառվում է՝ ուսումնասիրությունը միաժամանակ շարունակվելու պայմանով:

9. Ժամանակավոր փոխհատուցման տուրքը կիրառվում է սույն Համաձայնագրի 26-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 25

Լրավճար տրամադրող օտարերկրյա պետության կամ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կողմից կամավոր պարտավորությունների ստանձնումը

1. Ուսումնասիրությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել՝ առանց փոխհատուցման տուրք սահմանելու, եթե Մաքսային միության հանձնաժողովը որոշում է ընդունում ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից գրավոր ստացված կամավոր պարտավորությունները հաստատելու մասին, որոնց համաձայն՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

արտահանող օտարերկրյա պետությունը համաձայնում է չեղյալ համարել կամ կրճատել լրավճարի տրամադրումը կամ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ լրավճարման հետեւանքները վերացնելու նպատակով, կամ

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողը համաձայնում է վերանայել իր կողմից այդ ապրանքի համար սահմանված գները (Կողմ հանդիսացող պետություններում արտահանողի հետ կապ ունեցող անձանց առկայության դեպքում՝ ապահովել, որ այդ անձինք կողմ հանդես գան գների վերանայման մասին արտահանողի պարտավորություններին) այնպես, որ արտահանողի կողմից ստանձնած պարտավորությունների ուսումնասիրման արդյունքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է այն եզրակացության, որ նման կամավոր պարտավորությունների ստանձնումը կվերացնի Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Նման պարտավորությունների համաձայն՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնի աճը չպետք է գերազանցի արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի չափը, որը հաշվարկվել է լրավճարվող եւ արտահանվող ապրանքի մեկ միավորի համար:

Ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնի աճը կարող է ավելի պակաս լինել, քան արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի չափը, որը հաշվարկվել է լրավճարվող եւ արտահանվող ապրանքի մեկ միավորի համար, եթե նման աճը բավարար է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

2. Մաքսային միության հանձնաժողովը չի կայացնում կամավոր պարտավորությունները հաստատելու մասին որոշում, քանի դեռ ուսումնասիրություն իրականացնող մարմինը գալիս է լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին նախնական եզրահանգման:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Մաքսային միության հանձնաժողովը չի ընդունում ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի կամավոր պարտավորությունները հաստատելու մասին որոշում, քանի դեռ չի ստանում արտահանողների կողմից սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությունում նշված պարտավորությունների ստանձնման համար արտահանող օտարերկրյա պետության լիազոր մարմնի համաձայնությունը:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

3. Մաքսային միության հանձնաժողովը չի ընդունում կամավոր պարտավորությունները հաստատելու մասին որոշում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը գալիս է այն եզրահանգման, որ դրանց հաստատումն անընդունելի է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի առկա կամ հնարավոր արտահանողների թվի մեծ լինելու կամ այլ պատճառներով: Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հնարավորության դեպքում արտահանողներին հայտնում է այն պատճառները, որոնց հիման վրա նրանց կամավոր պարտավորությունները չեն հաստատվել, եւ արտահանողին այդ առթիվ մեկնաբանություններ տալու հնարավորություն է ընձեռում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կամավոր պարտավորություններ ստանձնած յուրաքանչյուր արտահանողին եւ արտահանող օտարերկրյա պետության լիազոր մարմինն հայց է ուղարկում՝ պահանջելով ներկայացնել նրանց՝ այդ պարտավորությունների ոչ գաղտնի տարբերակը, որպեսզի հնարավորություն ունենա ներկայացնելու այն շահագրգիռ անձանց:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է առաջարկել արտահանող օտարերկրյա պետությանը կամ ապրանքի արտահանողին ստանձնել կամավոր պարտավորությունները, սակայն չի կարող պահանջել դրանց ընդունումը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Այն դեպքում, երբ Մաքսային միության հանձնաժողովը կամավոր պարտավորությունները հաստատելու մասին որոշում է կայացնում, լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության առումով ուսումնասիրությունը կարող է շարունակվել՝ արտահանող օտարերկրյա պետության խնդրանքով կամ Մաքսային միության հանձնաժողովի որոշման հիման վրա:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Եթե ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է լրավճարված ներմուծման կամ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի բացակայության մասին եզրակացության, գնային պարտավորություններ ստանձնած արտահանողներն ինքնաբերաբար ազատվում են նման պարտավորություններից՝ բացառությամբ այն դեպքի, երբ նշված եզրակացությունը գլխավորապես նման պարտավորությունների առկայության արդյունքն է: Այն դեպքում, եթե կայացրած եզրակացությունը գլխավորապես կամավոր պարտավորությունների առկայության արդյունքն է, Մաքսային միության հանձնաժողովը կարող է որոշում կայացնել այն մասին, որ նման պարտավորությունները պետք է ուժի մեջ մնան անհրաժեշտ ժամկետով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

8. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին եզրակացության, ստանձնված կամավոր պարտավորությունները շարունակում են գործել՝ դրանց պայմանների եւ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Այն դեպքում, երբ արտահանողների կամավոր պարտավորությունները հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի կողմից, ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է արտահանող օտարերկրյա պետությունից կամ արտահանողից պահանջել դրանց կատարման հետ կապված տեղեկությունները, ինչպես նաեւ այդ տեղեկությունները ստուգելու համար համաձայնությունը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամկետում պահանջվող տեղեկությունները չներկայացնելը, ինչպես նաեւ այդ տեղեկություններն ստուգելու համար համաձայնություն չտալը համարվում են արտահանող օտարերկրյա պետության կամ արտահանողի կողմից ստանձնած կամավոր պարտավորությունների խախտում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Եթե արտահանող օտարերկրյա պետությունը կամ արտահանողը խախտում կամ չէրյալ է հայտարարում կամավոր պարտավորությունները, ապա Մաքսային միության հանձնաժողովը կարող է փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշում ընդունել՝ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով այն դեպքում, երբ ուսումնասիրությունը դեռ չի ավարտվել, կամ փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով, եթե ուսումնասիրության վերջնական արդյունքներով հաստատվում է դրա սահմանման համար հիմքերի առկայությունը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Արտահանող օտարերկրյա պետության կամ արտահանողի կողմից՝ իր ստանձնած կամավոր պարտավորությունները խախտելու դեպքում, վերջինիս հնարավորություն է տրվում այդ խախտման հետ կապված մեկնաբանություններ անել:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

11. Կամավոր պարտավորությունների հաստատման մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշման մեջ պետք է սահմանված լինի ժամանակավոր փոխհատուցման տուրքի կամ փոխհատուցման տուրքի դրույքաչափը, որը կարող է սահմանվել՝ սույն հոդվածի 10-րդ կետի համաձայն:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 26

Փոխհատուցման տուրքի սահմանումն ու կիրառումը

1. Փոխհատուցման տուրք սահմանելու մասին որոշումը կարող է ընդունվել Մաքսային միության հանձնաժողովի կողմից արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի գործողության ժամկետի ընթացքում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Փոխհատուցման տուրք սահմանելու մասին որոշումն ընդունվում է այն բանից հետո, երբ հատուկ լրավճար տրամադրող արտահանող օտարերկրյա պետությանն առաջարկվել է անցկացնել խորհրդակցություններ, սակայն այդ պետությունը հրաժարվել է առաջարկված խորհրդակցություններից կամ նման խորհրդակցությունների ընթացքում փոխադարձաբար ընդունելի որոշում չի կայացվել:

3. Փոխհատուցման տուրքը կիրառվում է բոլոր արտահանողների կողմից մատակարարվող եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնող լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի նկատմամբ՝ բացառությամբ այն արտահանողների կողմից մատակարարվող ապրանքի, որոնց կամավոր պարտավորությունները հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Մաքսային միության հանձնաժողովը կարող է սահմանել փոխհատուցման տուրքի առանձին դրույքաչափ՝ առանձին արտահանողների կողմից մատակարարվող ապրանքների նկատմամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Փոխհատուցման տուրքի չափը չպետք է գերազանցի լրավճարված եւ արտահանվող ապրանքի մեկ միավորի համար հաշվարկված արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի չափը:

Այն դեպքում, երբ լրավճարները տրամադրվում են լրավճարման տարբեր ծրագրերի համաձայն, հաշվի է առնվում դրանց գումարային չափը:

Փոխհատուցման տուրքի դրույքաչափը կարող է պակաս լինել արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի չափից այն դեպքում, երբ նման դրույքաչափը բավարար է Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

5. Փոխհատուցման տուրքի դրույքաչափը որոշելիս հաշվի են առնվում Կողմ հանդիսացող պետությունների այն սպառողների՝ ուսումնասիրություն իրականացնող մարմին գրավոր ներկայացրած կարծիքները, որոնց տնտեսական շահերի վրա կարող է ազդել փոխհատուցման տուրքի սահմանումը:

(5-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 27

Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը եւ դրա վերանայումը

1. Փոխհատուցման միջոցը կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ այնպիսի չափով եւ ժամկետով, որոնք անհրաժեշտ են լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 5 տարին՝ սկսած այդ միջոցի կիրառումն սկսելու օրվանից կամ կրկնակի ուսումնասիրությունն ավարտելու օրվանից, որն անցկացվում էր փոփոխված հանգամանքների հետեւանքով եւ միաժամանակ վերաբերում էր լրավճարված ներմուծման եւ դրա հետ կապված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի վերլուծությանը, կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով:

3. Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է սույն Համաձայնագրի 29-րդ հոդվածի համաձայն ներկայացված գրավոր դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է այն դեպքում, երբ դիմումի մեջ առկա են տվյալներ այն մասին, որ լրավճարված ներմուծումը կարող է վերսկսվել կամ շարունակվել եւ փոխհատուցման միջոցի գործողության դադարեցման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին կարող է վնաս հասցվել:

Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետն ավարտվելու հետեւանքով կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացվում է ոչ ուշ, քան փոխհատուցման միջոցի գործողության ժամկետի ավարտից առաջ վեց ամսվա ընթացքում:

Կրկնակի ուսումնասիրությունը պետք է սկսվի նախքան փոխհատուցման միջոցի գործողության ժամկետի ավարտը եւ ավարտվի վերջինս սկսելու օրվանից սկսած 12 ամսվա ընթացքում:

Նախքան սույն կետի դրույթների համաձայն անցկացվող կրկնակի ուսումնասիրության ավարտը, փոխհատուցման միջոցի կիրառումը երկարաձգվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ: Այն ժամանակահատվածի ընթացքում, որով երկարաձգվում է համապատասխան փոխհատուցման միջոցի կիրառումը, վճարվում են փոխհատուցման տուրքեր ժամանակավոր փոխհատուցման տուրքերը գանձելու համար սահմանված կարգով փոխհատուցման տուրքերի այնպիսի դրույքաչափերով, որոնք սահմանվել են փոխհատուցման այն միջոցի կիրառման առումով, որի գործողության ժամկետը երկարաձգվում է կրկնակի ուսումնասիրության անցկացման կապակցությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ փոխհատուցման միջոցի գործողության ժամկետի սպառման հետեւանքով անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ փոխհատուցման միջոցի կիրառման համար հիմքերը բացակայում են, փոխհատուցման տուրքի գումարները, որոնք գանձվում են ժամանակավոր փոխհատուցման տուրքի գանձման համար սահմանված կարգով այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվել է փոխհատուցման միջոցի կիրառումը, ենթակա են վերադարձման վճարողին սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Փոխհատուցման միջոցի գործողությունը երկարաձգվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից այն դեպքում, երբ փոխհատուցման միջոցի գործողության ժամկետի սպառման հետեւանքով անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ առկա է լրավճարված ներմուծման վերսկսման կամ շարունակման եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնելու հավանականություն: Փոխհատուցման միջոցի երկարաձգման մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից փոխհատուցման տուրքերի գումարները, որոնք գանձվում են ժամանակավոր փոխհատուցման տուրքի գանձման համար սահմանված կարգով այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվել է փոխհատուցման միջոցի կիրառումը, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումով այն դեպքում, երբ փոխհատուցման միջոցի սահմանումից անցել է առնվազն մեկ տարի, կարող է անցկացվել կրկնակի ուսումնասիրություն փոփոխվող հանգամանքների կապակցությամբ փոխհատուցման միջոցի կիրառումը շարունակելու եւ (կամ) դրա վերանայման՝ ներառյալ փոխհատուցման տուրքի առանձին դրույքաչափի վերանայման նպատակահարմարությունը որոշելու համար:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ելնելով փոփոխված հանգամանքների հետեւանքով կրկնակի ուսումնասիրության անցկացման մասին դիմումի ներկայացման նպատակներից՝ նման դիմումը պետք է պարունակի ապացույցներ այն մասին, որ

չի պահանջվում շարունակել փոխհատուցման միջոցի կիրառումը՝ լրավճարված ներմուծմանը հակազդելու եւ լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու նպատակով, կամ

փոխհատուցման միջոցի առկա չափը գերազանցում է այն չափը, որն անհրաժեշտ է լրավճարված ներմուծմանը հակազդելու եւ լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու նպատակով, կամ

առկա փոխհատուցման միջոցը բավարար չէ լրավճարված ներմուծմանը հակազդելու եւ լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

Սույն կետի համաձայն անցկացվող կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի վերջինիս սկսելու օրվանից հետո 12 ամսվա ընթացքում:

5. Սույն Համաձայնագրի V բաժնի դրույթները, որոնք վերաբերում են ապացույցների ներկայացմանը եւ ուսումնասիրության անցկացմանը, կիրառվում են սույն հոդվածով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են սույն Համաձայնագրի 25-րդ հոդվածի համաձայն արտահանող օտարերկրյա պետության կամ արտահանողի կողմից ընդունված պարտավորությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

7. Կրկնակի ուսումնասիրությունը կարող է նաեւ անցկացվել այն արտահանողի համար փոխհատուցման տուրքի առանձին դրույթաչափ սահմանելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է փոխհատուցման միջոցը, սակայն ուսումնասիրություն չի անցկացվել համազործակցությունից հրաժարվելուց տարբեր այլ պատճառներով: Նման կրկնակի ուսումնասիրությունը կարող է սկսվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ նշված արտահանողի դիմումի համաձայն:

(7-րդ կետին ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Հոդված 28

Փոխհատուցման միջոցի շրջանցման հաստատումը

1. Սույն հոդվածի նպատակով՝ փոխհատուցման միջոցի շրջանցում ասելով հասկացվում է ապրանքի մատակարարման եղանակի փոփոխում՝ փոխհատուցման տուրք վճարելուց կամ արտահանողի կողմից ստանձնած կամավոր պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով:

2. Փոխհատուցման միջոցի շրջանցումը հաստատելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված դիմումը պետք է պարունակի հետևյալ ապացույցները՝

1) փոխհատուցման միջոցի շրջանցումը.

2) Փոխհատուցման միջոցի՝ Կողմ հանդիսացող պետությունների շուկայում նույնանման ապրանքի արտադրության ծավալի եւ (կամ) վաճառքի եւ (կամ) գների վրա ազդեցության չեզոքացումը (դրա շրջանցման հետեւանքով).

3) հատուկ լրավճարի տրամադրումից ստացված օգուտի պահպանումն ապրանքի (տվյալ ապրանքի բաղադրատարրերի եւ (կամ) ածանցյալների) արտադրողի եւ (կամ) արտահանողի կողմից:

4. Սույն հոդվածի համաձայն անցկացվող կրկնակի ուսումնասիրության ժամանակահատվածի համար, Մաքսային միության հանձնաժողովը կարող է ժամանակավոր փոխհատուցման տուրքերի համար սահմանված կարգով գանձվող փոխհատուցման տուրք սահմանել լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի այն բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների համար, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանող օտարերկրյա պետությունից, ինչպես նաեւ լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի, եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների համար, որոնք ներմուծվում են

Մաքսային միության միասնական մաքսային տարածք այլ արտահանող օտարերկրյա պետությունից:

(4-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Այն դեպքում, երբ սույն հոդվածի համաձայն անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի հաստատում փոխհատուցման միջոցի շրջանցում, ժամանակավոր փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարվող փոխհատուցման տուրքի գումարները, որոնք վճարվել են սույն հոդվածի համաձայն, ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 6-րդ կետում սահմանված կարգով:

(5-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Այն դեպքում, երբ սույն հոդվածի համաձայն անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է սույն Համաձայնագրի համաձայն կիրառվող փոխհատուցման միջոցի շրջանցում, ապա փոխհատուցման միջոցը Մաքսային միության հանձնաժողովի կողմից կարող է տարածվել լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների վրա, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանող օտարերկրյա պետությունից, ինչպես նաեւ լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի, եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերի եւ (կամ) ածանցյալների վրա, որոնք ներմուծվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածք այլ արտահանող օտարերկրյա պետությունից: Սույն կետում նշված հակազնագցման միջոց սահմանելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, ժամանակավոր փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարված փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են հաշվեգրման եւ բաշխման՝ սույն Համաձայնագրի 28-1 հոդվածի 5-րդ կետում սահմանված կարգով:

(6-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Փոխհատուցման միջոցի շրջանցումը հաստատելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի՝ վերջինս սկսելու օրվանից հետո 9 ամսվա ընթացքում:

Հողված 28-1

Հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքերը վճարելը (զանձելը), հաշվեգրելը, բաշխելը եւ վերադարձնելը

(ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

1. Սույն հոդվածում օգտագործվող եզրույթները կիրառվում են այն նշանակությամբ, որը սահմանված է Մաքսային միության օրենսգրքով եւ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք գործող այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով:

2. Եթե Մաքսային միության հանձնաժողովը որոշում է կայացնում կիրառել հատուկ պաշտպանական, հակազնագցման, փոխհատուցման միջոց՝ սահմանելով հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրք այն ապրանքների համար, որոնց նկատմամբ սահմանվում են այնպիսի մաքսային ընթացակարգեր, որոնց պայմանների համաձայն, Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան, հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու առումով նախատեսվում է սահմանափակումների պահպանում, ապա վճարվում են հատուկ պաշտպանական, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր ներմուծման մաքսատուրքերի համար նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկումը, տվյալ տուրքերը վճարելու պարտավորությունների առաջացումը եւ դադարեցումը, դրանց վճարման ժամկետների եւ կարգի որոշումն իրականացվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքով՝ ներմուծման մաքսատուրքերի համար նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետների փոփոխումը հետաձգման կամ մաս-մաս վճարման տեսքով չի իրականացվում:

Սահմանված ժամկետում հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու կամ ոչ ամբողջությամբ վճարելու դեպքում դրանց գանձումն իրականացվում է Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրությամբ՝ ներմուծման մաքսատուրքերի համար

սահմանված կարգով, որի մաքսային մարմինն իրականացնում է մաքսատուրքերի, հարկերի գանձում՝ տուժանքների ավելացմամբ: Ընդ որում, տուժանքների հաշվարկման, գանձման եւ վերադարձման կարգը համանման է այն կարգին, որը սահմանված է ներմուծման մաքսատուրքերը չվճարելու կամ ոչ ամբողջությամբ վճարելու հետ կապված վճարվող, գանձվող տուրքերի համար:

Սույն կետի դրույթները տարածվում են ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնագցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքերի հաշվարկման, վճարման եւ գանձման վրա:

3. Հատուկ պաշտպանական, հակազնագցման, փոխհատուցման միջոց կիրառելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները (բացառությամբ նախնական հատուկ, հակազնագցման, նախնական փոխհատուցման տուրքերի), որոնց վճարման պարտավորությունը Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներս բերվող ապրանքների առումով ծագել է նշված միջոցի կիրառումն սկսելու օրվանից, ենթակա են հաշվեգրման եւ բաշխման Կողմ հանդիսացող պետությունների բյուջեներ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով սահմանված կարգով եւ նորմատիվներով:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են հաշվեգրման ազգային արժույթով Կողմ հանդիսացող այն պետության լիազոր մարմնի ընդհանուր հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն՝ այդ թվում տվյալ տուրքերի գանձման դեպքում:

Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմիններն առանձին-առանձին հաշվի են առնում՝

- հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի մուտքերի (վերադարձման) գումարները.

- բաշխված հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները, որոնք փոխանցվել են այլ Կողմ հանդիսացող պետությունների արտարժույթային հաշիվներին.

- Կողմ հանդիսացող պետության բյուջե հաշվեգրված մուտքերի գումարները, որոնք առաջացել են այդ Կողմ հանդիսացող պետության կողմից հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը բաշխելու հետեւանքով:

- այլ Կողմ հանդիսացող պետություններից Կողմ հանդիսացող պետության բյուջե մուտք եղած հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները:

Վերոնշյալ մուտքերն առանձին արտացոլվում են Կողմերից յուրաքանչյուրի բյուջեի կատարողականներում:

Կողմ հանդիսացող պետության լիազոր մարմնի ընդհանուր հաշվին Կողմ հանդիսացող պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրը մուտք եղած հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները, արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարողականում:

Կողմ հանդիսացող պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները Կողմ հանդիսացող պետության ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ փոխանցվում են տվյալ Կողմ հանդիսացող պետության բյուջե եւ Կողմ հանդիսացող այլ պետությունների արտարժութային հաշիվներին, ինչպես նաեւ արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարողականում:

Այլ Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից՝ Կողմ հանդիսացող պետության բյուջե այլ Կողմերի օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրը մուտք եղած հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի բաշխումից ստացված եկամուտն արտացոլվում է ընթացիկ տարվա բյուջեի կատարողականում:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարվում են վճարողների կողմից Կողմ հանդիսացող այն պետության լիազոր մարմնի հաշվին, որում դրանք ենթակա են վճարման՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության, առանձին հաշվարկային (վճարման) փաստաթղթերի (հանձնարարականների) համաձայն:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը կարող են փոխանցվել հարկերի եւ հավաքագրումների, ինչպես նաեւ այլ վճարների համար նախատեսված հաշիվներին:

Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին կարող են փոխանցվել հարկերն ու հավաքագրումները, ինչպես նաև այլ վճարները (բացառությամբ ներմուծման մաքսատուրքերի, ինչպես նաև արտահանման մաքսատուրքերի, որոնք կիրառվում են այն հում նավթի եւ նավթից ստացված ապրանքների առանձին կատեգորիաների (նավթամթերքների) նկատմամբ, որոնք արտահանվում են Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս), որոնք մուտք են արվում Կողմ հանդիսացող պետության լիազոր մարմնի հաշվին՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն:

Լիազոր մարմնի միասնական հաշվին գտնվող դրամական միջոցները չեն կարող գանձվել ո՛չ դատական ակտերի կատարման կարգով, ո՛չ որեւէ այլ եղանակով:

4. Ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքերը վճարվում են (գանձվում) ազգային արժույթով Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրությամբ սահմանված հաշվին, որի մաքսային մարմինները գանձում են ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքերը:

5. Սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքերի վճարված (գանձված) գումարները, ինչպես նաև հատուկ, հակազնազցման, փոխհատուցման այն տուրքերի գումարները, որոնք վճարվել են ժամանակավոր տուրքերի համապատասխան տեսակների գանձման համար սահմանված կարգով, դասվում են հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերին եւ հաշվեգրվում այն Կողմ հանդիսացող պետության լիազոր մարմնի հաշվին, որտեղ դրանք վճարվել են, ոչ ուշ, քան Մաքսային միության՝ հատուկ պաշտպանական, հակազնազցման, փոխհատուցման միջոց կիրառելու (երկարաձգման, բաղադրատարրերի եւ (կամ) ածանցյալների վրա տարածվելու) մասին համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց 30 աշխատանքային օր հետո:

6. Վճարողին ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքերը վերադարձնելն իրականացվում է սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում՝ Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որտեղ վճարվել (գանձվել) է ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնազցման, ժամանակավոր փոխհատուցման տուրքը:

7. Ավելի վճարված (գանձված) հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վճարողին վերադարձվում են լիազոր մարմնի ընդհանուր հաշվից ընթացիկ օրը հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարների սահմաններում, որոնք մուտք են գործել լիազոր մարմնի ընդհանուր հաշիվ եւ հաշվեգրվել հաշվետու օրվա ընթացքում՝ հաշվի առնելով հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարները, որոնք ազգային (կենտրոնական) բանկի կողմից չեն ընդունվել կատարման հաշվետու օրը:

Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի ընդհանուր հաշվից ավելորդ վճարված (գանձված) հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վճարողին վերադարձվում են հաշվետու օրվա ընթացքում հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարների սահմաններում, որոնք մուտք են գործել (հաշվեգրվել են) Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի ընդհանուր հաշվին գումարների վերադարձման օրը:

Ընթացիկ օրվա ընթացքում վերադարձման ենթակա հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները սահմանվում են նախքան հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը Կողմ հանդիսացող պետությունների բյուջեների միջեւ բաշխելը:

Եթե հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վերադարձնելու համար առկա չեն բավարար միջոցներ, սույն կետի առաջին եւ երկրորդ պարբերությունների համաձայն, դրանք վերադարձվում են Կողմ հանդիսացող պետության կողմից հաջորդող աշխատանքային օրերին: Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարողին ոչ ժամանակին վերադարձնելու համար տուժանքները (տոկոսները) վճարվում են վճարողին Կողմ հանդիսացող տվյալ պետության բյուջեից եւ չեն ներառվում հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի մեջ:

8. Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի՝ սույն հոդվածով սահմանված հաշվեգրման եւ Կողմ հանդիսացող պետությունների միջեւ բաշխման կարգը կիրառվում է նաեւ տուժանքների համար:

9. Կողմ հանդիսացող պետությունների միջեւ հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների բաշխումն իրականացվում է Կողմ հանդիսացող պետության լիազոր մարմնի կողմից Կողմ հանդիսացող պետության՝ այն հաշվետու օրվան

հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, որի ընթացքում հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվեգրվել են լիազոր մարմնի ընդհանուր հաշվին:

Կողմ հանդիսացող պետությունների բյուջեներ բաշխման ենթակա հատուկ, գնազցման, փոխհատուցման տուրքերի ընդհանուր գումարը որոշվում է այն հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարից, որոնք մուտք են գործել (հաշվեգրվել են) հաշվետու օրվա ընթացքում, հանելով ընթացիկ օրվա ընթացքում վճարողին վերադարձման ենթակա հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարները՝ հաշվի առնելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վերադարձման ենթակա գումարի փոխանցման մասին հաշվարկային (վճարման) այն փաստաթղթերը (հանձնարարականները), որոնք ազգային (կենտրոնական) բանկի կողմից չեն ընդունվել ի կատարման հաշվետու օրը:

10. Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարների փոխանցումը Կողմ հանդիսացող պետություններին իրականացվում է Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից մյուս Կողմ հանդիսացող պետությունների արտարժույթային հաշիվներին՝ լիազոր մարմնի միասնական հաշվին դրանց հաշվեգրման օրվանից հետո Կողմ հանդիսացող պետության հաջորդ աշխատանքային օրը:

Կողմ հանդիսացող պետություններին հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վերադարձման ենթակա գումարի փոխանցման մասին հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (հանձնարարականը) պետք է լիազոր մարմնի կողմից ուղարկվի ազգային (կենտրոնական) բանկ Կողմ հանդիսացող մյուս պետությունների արտարժույթով հաշիվներին հետագա փոխանցում կատարելու համար՝ Կողմ հանդիսացող պետությունում այն աշխատանքային օրվա մինչև ժամը 14-ը, որը հաջորդում է հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարները Կողմ հանդիսացող պետության լիազոր մարմնի ընդհանուր հաշվին հաշվեգրելու օրվան: Փոխանցում կատարելու համար նախատեսված նշված հաշվարկային (վճարման) փաստաթղթում (հանձնարարականում) նշվում է այն ամսաթիվը, որին իրականացվում է հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի բաշխումը, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետությունների բյուջեների միջև բաշխման ենթակա գումարը՝ ազգային արժույթով:

11. Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների միջև սույն Համաձայնագիրը կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումն

իրականացվում է՝ Մաքսային միության հանձնաժողովի՝ տեղեկությունների փոխանակման կարգը, ձեւը եւ ժամկետները սահմանող որոշման համաձայն:

V. Ուսումնասիրությունների անցկացումը

Հոդված 29

Ուսումնասիրություն անցկացնելու հիմքերը

1. Ներմուծման ավելացված ծավալի եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայությունը հաստատելու նպատակով, ինչպես նաեւ գնագցող կամ լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը, նման վնաս հասցնելու վտանգը կամ դրա ստեղծման էական դանդաղումը հաստատելու նպատակով ուսումնասիրություն անցկացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ գրավոր դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված դիմումը ներկայացվում է՝

1) նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրողի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմումի ներկայացման դեպքում) կամ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումի ներկայացման դեպքում) արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից.

2) արտադրողների միության կողմից, որի մասնակիցների թվին են պատկանում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմումի ներկայացման դեպքում) կամ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումի ներկայացման դեպքում) արտադրության ընդհանուր ծավալի

զգալի մասի՝ առնվազն 25 տոկոսի արտադրողները, կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից:

(2-րդ ենթակետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Նման արտադրողների եւ միությունների լիազորված ներկայացուցիչները պետք է ունենան պատշաճ կերպով ձեւակերպված՝ փաստաթղթերով հաստատված լիազորություններ, որոնց բնօրինակները դիմումի հետ ներկայացվում են ուսումնասիրություն իրականացնող մարմին:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված դիմումին կցվում են նույնանման կամ անմիջականորեն մրցակցող կամ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրողների՝ դիմումին կողմ հանդես գալու մասին ապացույցներ: Դիմումին կողմ հանդես գալու համար բավարար ապացույցներ են համարվում՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) Կողմ հանդիսացող պետություններում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի այն արտադրողների՝ դիմումին միանալու մասին փաստաթղթերը, որոնք դիմումատուի հետ արտադրում են Կողմ հանդիսացող պետություններում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի զգալի մասը՝ առնվազն 25 տոկոսը (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմումի ներկայացման դեպքում):

(1-րդ ենթակետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2) այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում է, որ դիմումին կողմ հանդես եկած արտադրողների կողմից (այդ թվում՝ դիմումատուի կողմից) Կողմ հանդիսացող պետություններում իրականացվող նույնանման ապրանքի արտադրության մասնաբաժինը կազմում է Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի առնվազն 25 տոկոսը՝ պայմանով, որ դիմումին կողմ հանդես եկած արտադրողների կողմից (այդ թվում՝ դիմումատուի կողմից) Կողմ հանդիսացող պետություններում իրականացվող նույնանման ապրանքի արտադրության ծավալը կազմում է դիմումի վերաբերյալ (հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելիս) իրենց կարծիքն արտահայտած (կողմ հանդես եկած կամ մերժած)

արտադրողների կողմից Կողմ հանդիսացող պետություններում իրականացվող նույնանման ապրանքի արտադրության ծավալի ավելի, քան 50 տոկոսը:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված դիմումը պետք է պարունակի՝

1) տվյալներ դիմումատուի, դիմումը ներկայացնելու օրվան անմիջապես նախորդող 3 տարվա ընթացքում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի կողմից իրականացվող նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում), նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում) արտադրության ծավալի մասին՝ քանակային կամ արժեքային արտահայտությամբ, ինչպես նաև դիմումին կողմ հանդես եկած արտադրողների կողմից Կողմ հանդիսացող պետություններում իրականացվող նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում), կամ նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում) արտադրության ծավալի մասին՝ քանակային կամ արժեքային արտահայտությամբ, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետություններում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում), կամ նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում) ընդհանուր արտադրության ծավալի նրանց մասնաբաժնի մասին.

2) Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող այն ապրանքի բնութագիրը, որի նկատմամբ առաջարկվում է սահմանել հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոց՝ նշելով Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի կողմը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3) արտահանող օտարերկրյա պետությունների կամ տվյալ ապրանքի ծագման կամ այն ուղարկող պետությունների անունները՝ մաքսային վիճակագրության տվյալների հիման վրա:

4) արտահանող օտարերկրյա պետություններում տվյալ ապրանքի հայտնի արտադրողների եւ (կամ) արտահանողների մասին եւ Կողմ հանդիսացող

պետություններում տվյալ ապրանքի հայտնի ներմուծողների եւ հիմնական հայտնի սպառողների մասին տեղեկություններ.

5) Մաքսային միության միասնական մաքսային տարածք այն ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության մասին տվյալներ, որի նկատմամբ առաջարկվել է սահմանել հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոց, նախորդող ժամանակահատվածի համար, ինչպես նաեւ հաջորդող այն ժամանակահատվածի համար, որի համար դիմումի ներկայացման օրվա դրությամբ առկա են վիճակագրական ներկայացուցչական տվյալներ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6) նախորդող ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաեւ հաջորդող ժամանակահատվածի ընթացքում, որի համար դիմումի ներկայացման օրվա դրությամբ առկա են ներկայացուցչական վիճակագրական տվյալներ, Մաքսային միության միասնական մաքսային տարածքից նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմումի ներկայացման դեպքում) արտահանման ծավալի փոփոխման մասին տեղեկություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունների հետ մեկտեղ, ելնելով դիմումի մեջ առաջարկվող միջոցից, դիմումատուն նշում է՝

1) Ներմուծման ավելացված ծավալի առկայության ապացույցները, ներմուծման ավելացված ծավալի հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության ապացույցները, հատուկ պաշտպանական միջոց սահմանելու մասին առաջարկությունը՝ նշելով տվյալ միջոցի չափը եւ տեսողությունը, եւ դիմումատուի կողմից առաջարկվող հատուկ պաշտպանական միջոցի գործողության ընթացքում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի՝ օտարերկրյա մրցակցության պայմաններում աշխատանքին ադապտացվելու համար նախատեսված միջոցառումների նախագիծը.

2) ապրանքի արտահանման գնի եւ սովորական արժեքի մասին տեղեկությունները, գնագցող ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության

ճյուղին հասցված նյութական վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության, կամ դրա ստեղծման գործընթացի էական դանդաղեցման մասին ապացույցները, ինչպես նաև հակազնազգման միջոց սահմանելու մասին առաջարկը՝ նշելով դրա չափը եւ գործողության ժամկետը (հակազնազգման միջոցի կիրառման մասին դիմումի մեջ):

3) արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի առկայության եւ բնույթի, եւ հնարավորության դեպքում նաև դրա չափի մասին տեղեկությունները, լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության, կամ այդ ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման մասին ապացույցները, ինչպես նաև փոխհատուցման միջոց սահմանելու մասին առաջարկը՝ նշելով դրա չափը եւ գործողության ժամկետը (հակազնազգման միջոցի կիրառման մասին դիմումի մեջ):

Գնազցող ներմուծման կամ լրավճարված ներմուծման հետեւանքով Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության ապացույցները (հատուկ պաշտպանական միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրության անցկացման մասին դիմում ներկայացնելու դեպքում) եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման մասին ապացույցները (հակազնազգման միջոցի կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմումի մեջ) պետք է հիմնվեն օբյեկտիվ այն գործոնների վրա, որոնք բնութագրում են Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի տնտեսական վիճակը եւ պետք է արտահայտվեն քանակային կամ արժեքային ցուցանիշներով (այդ թվում՝ ապրանքի արտադրության ծավալը եւ դրա իրացման ծավալը, Կողմ հանդիսացող պետությունների շուկայում ապրանքի մասնաբաժինը, ապրանքի արտադրության ինքնարժեքը, ապրանքի գինը, արտադրական կարողությունների շահագործման չափը, աշխատանքի արտադրողականությունը, շահույթի չափը, արտադրության եկամտաբերության, ապրանքի իրացման ծավալը, Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղ ներդրումների ծավալը):

(5-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Դիմումի ներկայացման ամսաթիվ է համարվում տվյալ դիմումի՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնում գրանցման ամսաթիվը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Դիմումի մեջ պարունակվող ցուցանիշները նշելիս համադրելիության նպատակով պետք է օգտագործվեն ընդհանուր գումարային եւ քանակական միավորներ:

8. Դիմումի մեջ ներառված տեղեկությունները պետք է վավերացվեն արտադրողների ղեկավարների կողմից, որոնք ներկայացրել են այդ տեղեկությունները, ինչպես նաեւ նրանց՝ հաշվապահական հաշվառում վարելու եւ հաշվապահական հաշվետվությունները կազմելու համար պատասխանատու աշխատակիցների կողմից՝ տվյալ արտադրողներին անմիջականորեն վերաբերող տեղեկությունների մասով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Դիմումը, որին կցվում է դրա ոչ գաղտնի տարբերակը, (այն դեպքում, երբ դիմումի մեջ առկա են գաղտնի տեղեկություններ), ներկայացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմին՝ սույն համաձայնագրի 3-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթների համաձայն, եւ ենթակա է գրանցման տվյալ մարմնի կողմից դիմումի ստացման օրը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Հատուկ պաշտպանական միջոց, հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումը մերժվում է հետեւյալ հիմքերով՝

դիմում ներկայացնելիս սույն հոդվածի 3-5 կետերում նշված նյութերը չներկայացնելու դեպքում.

դիմումատուի կողմից ներկայացված՝ սույն հոդվածի 3-5 կետերով նախատեսված նյութերի ոչ հավաստի լինելու դեպքում:

Այլ հիմքերով դիմումի մերժումը չի թույլատրվում:

11. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը նախքան ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելը հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմում ստանալու վերաբերյալ գրավոր տեղյակ է պահում արտահանող օտարերկրյա պետությանը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

12. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը նախքան ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելը դիմումի գրանցման օրվանից սկսած 30 օրացուցային օրվա

ընթացքում ուսումնասիրում է տվյալ դիմումի մեջ պարունակվող ապացույցների եւ տեղեկությունների բավարար եւ հավաստի լինելը՝ սույն հոդվածի 3–5 կետերի համաձայն: Նման ժամկետը կարող է երկարաձգվել այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինն անհրաժեշտ է ստանալ հավելյալ տեղեկություններ դիմումատուի կողմից, բայց ցանկացած դեպքում, այդ ժամկետը չի կարող գերազանցել 60 օրացուցային օրը:

(2011 թվականի հոկտեմբերի 18–ի Արձանագրության խմբագրությամբ)

13. Դիմումը կարող է չեղարկվել դիմումատուի կողմից նախքան ուսումնասիրությունն սկսելը կամ դրա իրականացման ընթացքում:

Դիմումը համարվում է չներկայացված, եթե այն չեղարկվել է նախքան ուսումնասիրության սկսելը:

Եթե դիմումը չեղարկվում է ուսումնասիրության անցկացման ընթացքում, ուսումնասիրությունը դադարեցվում է՝ առանց հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոց սահմանելու:

14. Նախքան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման ընդունումը դիմումի մեջ ներառված տեղեկությունները չեն հրապարակվում:

Հոդված 30

Ուսումնասիրություն սկսելը եւ անցկացնելը

1. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան սույն Համաձայնագրի 29-րդ հոդվածի 12-րդ կետում նշված ժամկետի ավարտը, որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ դրա անցկացումը մերժելու վերաբերյալ:

(2011 թվականի հոկտեմբերի 18–ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ուսումնասիրության անցկացումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինը նման որոշում ընդունելու օրվանից հետո առնվազն 10 օրացուցային օրվա ընթացքում տեղյակ է պահում դիմումատուին ուսումնասիրության անցկացումը մերժելու պատճառի մասին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելու դեպքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը գրավոր տեղյակ է պահում արտահանող օտարերկրյա պետության լիազոր մարմնին, ինչպես նաև իրեն հայտնի մյուս շահագրգիռ անձանց ընդունված որոշման մասին եւ որոշումն ընդունելու օրվանից հետո առնվազն 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է ուսումնասիրությունն սկսելու մասին ծանուցման հրապարակումը պաշտոնական տպագիր հրատարակությունում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3-1. Մաքսային միության հանձնաժողովի պաշտոնական կայքէջում ուսումնասիրությունն սկսելու մասին ծանուցման հրապարակման ամսաթիվ է համարվում ուսումնասիրությունն սկսելու ամսաթիվը:

(3-1 կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշում ընդունել՝ այդ թվում սեփական նախաձեռնությամբ, միայն այն դեպքում, երբ վերջինիս տրամադրության տակ առկա են ապացույցներ ներմուծման ավելացված ծավալի եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության, կամ գնագող կամ լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության կամ տվյալ ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման մասին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ առկա ապացույցները բավարար չեն, նման ուսումնասիրությունը չի կարող սկսվել:

4-1. Հատուկ պաշտպանական, հակազնազգման կամ փոխհատուցման միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրության ժամանակահատվածը սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

(4-1 կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

5. Շահագրգիռ անձինք իրավունք ունեն գրավոր եւ սույն Համաձայնագրով նախատեսված ժամկետում հայտարարեն ուսումնասիրությանը մասնակցելու իրենց մտադրության մասին: Նրանք համարվում են ուսումնասիրության մասնակիցներ ուսումնասիրությանը մասնակցելու մտադրության մասին դիմումն ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացնելու օրից:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ուսումնասիրության ընթացքը չխախտող ժամկետներում ներկայացնել ուսումնասիրության անցկացման համար անհրաժեշտ տեղեկությունները՝ ներառյալ գաղտնի տեղեկությունները՝ նշելով նման տեղեկությունների ստացման աղբյուրը:

7. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է ուսումնասիրության նպատակով շահագրգիռ անձից պահանջել հավելյալ տեղեկություններ:

Հայցը համարվում է շահագրգիռ անձի կողմից ստացված շահագրգիռ անձի լիազոր ներկայացուցչին այն փոխանցելու պահից, կամ հայցը փոստային կապի միջոցով ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո:

Շահագրգիռ անձի պատասխանը պետք է ներկայացվի ուսումնասիրություն իրականացնող մարմին ոչ ուշ, քան հայցը ստանալու օրվանից 30 օր հետո: Նշված ժամկետը լրանալուն պես շահագրգիռ անձի կողմից ներկայացված տեղեկությունները կարող են հաշվի չառնվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

Շահագրգիռ անձի հիմնավորված եւ գրավոր ներկայացված խնդրանքով պատասխանի տրամադրման ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

(7-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

8. Այն դեպքում, երբ շահագրգիռ անձը մերժում է ուսումնասիրություն իրականացնող մարմնին անհրաժեշտ տեղեկությունները տրամադրումը, չի ներկայացնում այդ տեղեկությունները սահմանված ժամկետում կամ ներկայացնում է ոչ հավաստի տեղեկություններ, այդպիսով զգալիորեն բարդացնելով ուսումնասիրության իրականացումը, նման շահագրգիռ մարմինը համարվում է չհամագործակցող եւ նախնական կամ վերջնական եզրակացությունները կարող են կայացվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ վերջինիս ունեցած տեղեկությունների հիման վրա:

Հայցվող տեղեկություններն էլեկտրոնային եղանակով կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի հայցում որոշված ձեռնարկով չտրամադրելը չպետք է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից համարվի որպես համագործակցելուց հրաժարվել՝ պայմանով, որ համապատասխան շահագրգիռ անձը կարող է ապացուցել, որ ուսումնասիրություն իրականացնող մարմնի հայցում սահմանված՝ տեղեկությունների ներկայացման չափորոշիչների ամբողջական կատարումն անհնար է կամ կապված է զգալի չափով նյութական ծախքերի հետ:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի չի առնում շահագրգիռ անձի կողմից ներկայացված տեղեկությունները սույն կետի առաջին պարբերությունում նշված պատճառներից տարբեր այլ պատճառներով, ապա տվյալ անձը պետք է տեղեկացվի նման որոշում կայացնելու պատճառների եւ հիմքերի մասին եւ նրան պետք է հնարավորություն տրվի այդ կապակցությամբ անել մեկնաբանություններ ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից որոշված ժամկետում:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախնական կամ վերջնական եզրակացության պատրաստման՝ ներառյալ ապրանքի սովորական արժեքի որոշման ընթացքում (հակազնագման ուսումնասիրության անցկացման ընթացքում) կիրառվել են սույն կետի առաջին պարբերության դրույթները եւ օգտագործվել են տեղեկություններ՝ ներառյալ դիմումատուի կողմից տրամադրված տեղեկությունները, ապա նման եզրակացությունների պատրաստման ընթացքում օգտագործված տեղեկությունները պետք է ստուգվեն՝ կիրառելով երրորդ աղբյուրներից կամ շահագրգիռ անձանց կողմից ստացվող մատչելի տեղեկությունները՝ պայմանով, որ նման ստուգման անցկացումը չի բարդացնի ուսումնասիրության ընթացքը եւ չի հանգեցնի դրա անցկացման համար նախատեսված ժամկետների խախտման:

(8-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

9. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն ուսումնասիրության մասնակիցներին տրամադրում է դիմումի պատճենները կամ դրա ոչ գաղտնի տարբերակն այն դեպքում, երբ դիմումի մեջ առկա են գաղտնի տեղեկություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը, հաշվի առնելով գաղտնի տեղեկությունները պաշտպանելու անհրաժեշտությունը, ուսումնասիրության մասնակիցներին՝ վերջիններիս պահանջով, որպես ուսումնասիրության

առարկայի հետ կապված ապացույցներ տրամադրում է ցանկացած շահագրգիռ անձի կողմից գրավոր ներկայացված տեղեկություններ՝ տվյալ տեղեկությունների հետ ծանոթանալու նպատակով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինն ուսումնասիրության մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու այլ այն տեղեկությունների հետ, որոնք կապված են ուսումնասիրության հետ եւ իրենց կողմից օգտագործվում են ուսումնասիրության ընթացքում, սակայն չեն համարվում գաղտնի տեղեկություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

10. Շահագրգիռ անձանց պահանջով՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինն անցկացնում է խորհրդակցություն անցկացվող ուսումնասիրության առարկայի վերաբերյալ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

11. Ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձանց հնարավորություն է տրվում պաշտպանել իրենց շահերը: Այդ նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմինը բոլոր շահագրգիռ անձանց՝ վերջիններիս հայցի հիման վրա, հանդիպելու հնարավորություն է տալիս այն նպատակով, որ նրանք կարողանան ներկայացնել հակադարձ կարծիքներ եւ հերքումներ առաջարկեն: Նման հնարավորությունն ընձեռվում է՝ հաշվի առնելով տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը: Հանդիպմանը բոլոր շահագրգիռ անձանց ներկայությունը պարտադիր չէ, եւ որեւէ շահագրգիռ անձի բացակայությունը՝ վերջինիս շահերին վնաս չի հասցնում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

12. Այն արտադրողները, որոնք արտադրանքի արտադրության մեջ օգտագործում են ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքը, սպառողների հասարակական միությունների ներկայացուցիչները, պետական իշխանության (կառավարման) մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաեւ այլ անձինք իրավունք ունեն ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացնել ուսումնասիրության հետ կապված տեղեկություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

13. Ուսումնասիրության իրականացման ժամկետը չպետք է գերազանցի՝

1) հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմումի հիման վրա ուսումնասիրությունն սկսելու օրվանից սկսած 9 ամիս ժամկետը: Այս ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ավելի, քան 3 ամսով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2) հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումի հիման վրա ուսումնասիրությունն սկսելու օրվանից սկսած 12 ամիս ժամկետը: Այս ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ավելի, քան 6 ամսով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

14. Ուսումնասիրության անցկացումը չպետք է խոչընդոտի ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մաքսային ձեւակերպմանը:

15. Ուսումնասիրությունն ավարտելու ամսաթիվ է համարվում սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված Մաքսային միության հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքների մասին զեկույցի եւ Մաքսային միության հանձնաժողովի որոշման նախագծի քննարկման ամսաթիվը:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոցը կիրառելու, վերանայելու կամ չեղյալ հայտարարելու համար հիմքերի բացակայության մասին վերջնական որոշում է կայացրել, ապա ուսումնասիրությունն ավարտելու ամսաթիվ է ճանաչվում ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից համապատասխան ծանուցման հրապարակման ամսաթիվը:

Ժամանակավոր հատուկ տուրք, ժամանակավոր հակազնագցման տուրք կամ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանվելու դեպքում, ուսումնասիրությունը պետք է ավարտվի նախքան համապատասխան ժամանակավոր տուրքի գործողության ժամկետի լրանալը:

(15-րդ կետին ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

30 հոդվածի 16-րդ կետը կիրառվում է՝ 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի համաձայն (այդ փաստաթղթի 43-րդ հոդվածի երկրորդ պարբերություն) մրցակցության միասնական կանոնները պահպանելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունները Մաքսային միության հանձնաժողովի կողմից փոխանցվելու օրվանից ի վեր:

16. Եթե ուսումնասիրություն սկսելու օրվան անմիջապես նախորդող երկու տարվա ընթացքում սույն Համաձայնագրի 29-րդ հոդվածի 1-ին կետում նշված դիմումին կողմ հանդես եկած մեկ արտադրողին (հաշվի առնելով վերջինիս՝ 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի իմաստով անձանց խմբին միանալը) հասնում է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրության անցկացման դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրության անցկացման դեպքում) արտադրության այնպիսի մասնաբաժին, որի դեպքում, Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատվող՝ մրցակցության դրության գնահատման մեթոդաբանության համաձայն, տվյալ արտադրողի դիրքը (հաշվի առնելով վերջինիս՝ անձանց խմբին միանալը) մաքսային միության համապատասխան ապրանքային շուկայում կարող է ճանաչվել գերիշխող, ապա Միասնական տնտեսական տարածքում մրցակցության միասնական կանոնները պահպանելու նկատմամբ վերահսկողության ոլորտում լիազորված մարմինն ուսումնասիրություն իրականացնող մարմնի պահանջով անցկացնում է հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոցի՝ Մաքսային միության համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության վրա ազդեցության հետեւանքների գնահատում:

(16-րդ կետին ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Հոդված 31

Հակազնագցման ուսումնասիրության անցկացման առանձնահատկությունները

1. Հակազնագցման ուսումնասիրությունը դադարեցվում է առանց հակազնագցման միջոցի սահմանման այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ գնագցման չափը նվազագույն թույլատրելի գնագցման չափից պակաս է, կամ իրականացված կամ հնարավոր գնագցող ներմուծման ծավալը կամ նման ներմուծմամբ պայմանավորված նյութական վնասի չափը կամ նման վնաս հասցնելու կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման վտանգն աննշան են:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Ընդ որում նվազագույն թույլատրելի գնագցման չափի ասելով ենթադրվում է գնագցման այն չափը, որը չի գերազանցում 2 տոկոսը:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

2. Որոշակի արտահանող օտարերկրյա պետությունից գնագցող ներմուծման ծավալն աննշան է, եթե այն կազմում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 3 տոկոսը՝ պայմանով, որ արտահանող օտարերկրյա պետություններին, որոնցից յուրաքանչյուրի առանձին մասնաբաժինը Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 3 տոկոսից պակաս է, միասին վերցված հասնում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի ոչ ավելի, քան 7 տոկոսը:

(2-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան հակազնագցման ուսումնասիրության արդյունքներով որոշում կայացնելը, ուսումնասիրության մասնակիցներին է ուղարկում վերջնական եզրակացության ոչ գաղտնի տարբերակը եւ նրանց՝ իրենց մեկնաբանությունները տալու հնարավորություն ընձեռում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 32

Փոխհատուցման ուսումնասիրության անցկացման առանձնահատկությունները

1. Փոխհատուցման ուսումնասիրությունը դադարեցվում է առանց փոխհատուցման միջոցի սահմանման այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարի չափը նվազագույն է, կամ իրականացված կամ հնարավոր լրավճարված ներմուծման ծավալը կամ նման ներմուծմամբ պայմանավորված նյութական վնասի չափը կամ նման վնաս հասցնելու կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման վտանգն աննշան են:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Հատուկ լրավճարի չափը ճանաչվում է նվազագույն, եթե այն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արժեքի 1 տոկոսից պակաս է:

Լրավճարված ներմուծման ծավալը, որպես կանոն, ճանաչվում է աննշան, եթե այն ավելի պակաս է, քան Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 1 տոկոսը՝ պայմանով, որ արտահանող օտարերկրյա պետություններին, որոնցից յուրաքանչյուրի առանձին մասնաբաժինը Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 1 տոկոսից պակաս է, միասին վերցված հասնում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի ոչ ավելի, քան 3 տոկոսը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող եւ Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող զարգացող երկրից ծագող ապրանքի առումով փոխհատուցման ուսումնասիրությունը դադարեցվում է այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատում է, որ տվյալ ապրանքի նկատմամբ տրամադրված արտահանող օտարերկրյա պետության հատուկ լրավճարների ընդհանուր չափը չի գերազանցում դրա արժեքի 2 տոկոսը՝ ապրանքի մեկ միավորի հաշվով, կամ տվյալ օտարերկրյա պետությունից նշված ապրանքի ներմուծման

մասնաբաժինը Մաքսային միության միասնական մաքսային տարածք տվյալ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 4 տոկոսից պակաս է՝ պայմանով, որ Մաքսային միության միասնական մաքսային տարածք տվյալ ապրանքի՝ զարգացող երկրներից ներմուծման ընդհանուր մասնաբաժինը, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը Մաքսային միության միասնական մաքսային տարածք այդ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 4 տոկոսից պակաս է, չի գերազանցում Մաքսային միության մաքսային միասնական տարածք տվյալ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 9 տոկոսը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան փոխհատուցման ուսումնասիրության արդյունքներով որոշում կայացնելը, ուսումնասիրության մասնակիցներին է ուղարկում վերջնական եզրակացության ոչ գաղտնի տարբերակը եւ նրանց՝ իրենց մեկնաբանությունները տալու հնարավորություն ընձեռում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 33

Գնագոյ կամ լրավճարված ներմուծման դեպքում Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղը որոշելու առանձնահատկությունները

1. Հակազնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելիս՝ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղը ասելով հասկացվում է սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված իմաստով՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում նշված դեպքերի:

2. Եթե Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրողները միաժամանակ նաեւ այն ապրանքի ներմուծողներն են, որը ենթադրաբար գնագոյ կամ լրավճարված ներմուծման առարկա է, ապա Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղը ասելով կարող են հասկացվել միայն Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի մնացած արտադրողները:

Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղ ասելով կարող են հասկացվել միայն Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի մնացած արտադրողները, եթե՝

1) Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի առանձին արտադրողներ ուղղակի կամ ոչ ուղղակի կերպով վերահսկում են ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողներին կամ ներմուծողներին.

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողները կամ ներմուծողներն ուղղակի կամ ոչ ուղղակի կերպով վերահսկում են Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի արտադրողներին.

3) նույնանման ապրանքի առանձին արտադրողներ Կողմ հանդիսացող պետություններում եւ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողները կամ ներմուծողներն ուղղակի կամ ոչ ուղղակի կերպով վերահսկվում են երրորդ անձի կողմից.

4) Մաքսային միության անդամ պետություններում նույնանման ապրանքի առանձին արտադրողները եւ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի օտարերկրյա արտադրողները, արտահանողները կամ ներմուծողներն ուղղակի կամ ոչ ուղղակի կերպով վերահսկում են երրորդ անձին՝ պայմանով, որ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հիմքեր ունի ենթադրելու, որ տվյալ կապով է պայմանավորված տվյալ արտադրողների՝ առնչություն չունեցող անձանցից տարբերվող վարքագիծը:

(4-րդ ենթակետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Բացառիկ դեպքերում, Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղը սահմանելիս, տվյալ պետությունների տարածքը կարող է դիտվել որպես տարածք, որի վրա գործում են 2 եւ ավելի աշխարհագրորեն մեկուսացված մրցակցող շուկաներ, իսկ Կողմ հանդիսացող պետությունների արտադրողները՝ նշված շուկաներից մեկի սահմաններում, կարող են դիտարկվել որպես Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության առանձին ճյուղ, եթե տվյալ արտադրողներն սպառման կամ վերամշակման նպատակով նման շուկայում վաճառում են իրենց կողմից արտադրված նույնանման ապրանքի առնվազն 80 տոկոսը, եւ նույնանման ապրանքի պահանջարկը նման շուկայում գլխավորապես չի բավարարվում նման ապրանքի այն արտադրողների կողմից, որոնք գտնվում են Կողմ հանդիսացող պետությունների մնացած տարածքում:

Նման դեպքում գնագող կամ լրավճարված ներմուծման հետեւանքով նյութական վնասի, նման վնաս հասցնելու վտանգի կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման առկայություն կարող է հաստատվել նույնիսկ այն դեպքում, երբ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի հիմնական մասին վնաս չի հասցվել՝ պայմանով, որ գնագող կամ լրավճարված ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի վաճառքը կենտրոնացված է նշված մրցակցող շուկաներից մեկում եւ գնագող կամ լրավճարված ներմուծումը վնաս է հասցնում նույնանման ապրանքի բոլոր կամ գրեթե բոլոր արտադրողներին Կողմ հանդիսացող պետություններում՝ նման մեկ շուկայի սահմաններում:

4. Եթե Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղը հասկացվում է սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված իմաստով, եւ ուսումնասիրության արդյունքներով հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին որոշում է կայացվում, ապա նման միջոցը կարող է կիրառվել Մաքսային միության մաքսային միասնական տարածք ապրանքի ողջ ներմուծման նկատմամբ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Նման դեպքում հակագնագցման կամ փոխհատուցման տուրք սահմանվում է այն բանից հետո, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապրանքի արտահանողներին հնարավորություն է ընձեռում դադարեցնել տվյալ ապրանքի արտահանումն այդ տարածք գնագող գներով (գնագող ներմուծման դեպքում) կամ լրավճարված գներով (լրավճարված ներմուծման դեպքում) կամ ստանձնել համապատասխան պարտավորություններ Մաքսային միության միասնական մաքսային տարածք արտահանման պայմանների առումով՝ պայմանով, որ նման հնարավորությունն արտահանողների կողմից դեռ չի օգտագործվել:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 34

Հանրային լսումներ

1. Ուսումնասիրության ցանկացած մասնակցի կողմից գրավոր եւ սույն Համաձայնագրի համաձայն սահմանված ժամկետում ներկայացված միջնորդության հիման

վրա ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապահովում է հանրային լսումների անցկացում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը պարտավոր է ուսումնասիրության մասնակիցներին ուղարկել ծանուցում հանրային լսումների անցկացման ժամի եւ տեղի մասին, ինչպես նաեւ հանրային լսումների անցկացման ընթացքում քննարկվող հարցերի ցանկը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հանրային լսումների անցկացման օրը նշանակվում է ոչ շուտ, քան նման ծանուցում ուղարկելու օրվանից առնվազն 15 օր հետո:

3. Հանրային լսումներին իրավունք ունեն մասնակցել ուսումնասիրության մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, ինչպես նաեւ այն անձինք, որոնք ներգրավվել են մասնակիցների կողմից՝ իրենց մոտ եղած ուսումնասիրությանն առնչվող տեղեկությունները ներկայացնելու նպատակով:

Հանրային լսումների ընթացքում ուսումնասիրության մասնակիցները կարող են հայտնել իրենց կարծիքը եւ ներկայացնել ուսումնասիրությանն առնչվող ապացույցներ: Ուսումնասիրություն իրականացնող մարմնի ներկայացուցիչն իրավունք ունի հանրային լսումների մասնակիցներին՝ նրանց կողմից ներկայացվող փաստերի էությանը վերաբերող հարցեր հղել: Ուսումնասիրության մասնակիցները նաեւ իրավունք ունեն հարցեր հղել միմյանց եւ պարտավոր են պատասխանել այդ հարցերին: Հանրային լսումների մասնակիցները պարտավոր չեն բացահայտել գաղտնի համարվող տեղեկությունները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Հանրային լսումների ընթացքում բանավոր ներկայացված տեղեկությունները հաշվի են առնվում ուսումնասիրության ընթացքում, եթե դրանք ուսումնասիրության մասնակիցների կողմից գրավոր ներկայացվել են ուսումնասիրություն իրականացնող մարմին հանրային լսումներ անցկացնելուց հետո 15 օրվա ընթացքում:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 35

Ուսումնասիրության անցկացման ընթացքում տեղեկություններ հավաքելը

1. Հակազնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելուց հետո ուսումնասիրություն իրականացնող մարմինն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ իրեն հայտնի արտահանողներին եւ (կամ) արտադրողներին ուղարկում է այն հարցերի ցանկը, որոնց նրանք պետք է պատասխանեն:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հարցերի ցանկն ուղարկվում է նաեւ նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրության անցկացման դեպքում) կամ նույնանման ապրանքի արտադրողներին (հակազնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրության անցկացման դեպքում) Կողմ հանդիսացող պետություններում:

2. Ապրանքի արտահանողները եւ (կամ) արտադրողները, որոնց ուղարկվել է հարցերի ցանկը, պարտավոր են իրենց կողմից նշված ցանկը ստանալու օրվանից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում իրենց պատասխանները ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող մարմին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Արտահանողների եւ (կամ) արտադրողների՝ հիմնավորված եւ գրավոր ներկայացված խնդրանքի հիման վրա նշված ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից առավելագույնը 14 օրացուցային օր ժամկետով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Հարցերի ցանկը համարվում է ստացված արտահանողի եւ (կամ) արտադրողի կողմից՝ այն փոստով ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո կամ արտահանողի եւ (կամ) արտադրողի ներկայացուցչին անմիջականորեն փոխանցելու օրը:

Ցանկում ներառված հարցերի պատասխանները համարվում են ստացված ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, եթե դրանք ստացվել են ուսումնասիրություն իրականացնող մարմին գաղտնի կամ ոչ գաղտնի տարբերակներով սույն հոդվածի 2-րդ կետում նշված 30-օրյա ժամկետը լրանալու օրվանից կամ երկարաձգված ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 7 օր հետո:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը համոզվում է ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձանց կողմից ներկայացված տեղեկությունների ճշգրտության եւ հավաստիության մեջ:

Ուսումնասիրության ընթացքում ներկայացված տեղեկությունները ստուգելու կամ անցկացվող ուսումնասիրության հետ կապված հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով, ուսումնասիրություն իրականացնող մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է անցկացնել ստուգում.

օտարերկրյա պետության տարածքում՝ պայմանով, որ այն ստանում է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի համապատասխան օտարերկրյա արտահանողների եւ (կամ) արտադրողների համաձայնությունը եւ նախատեսվող ուսումնասիրության մասին նախապես պաշտոնապես ծանուցված օտարերկրյա պետության կողմից առարկությունները բացակայում են,

Կողմ հանդիսացող պետության տարածքում՝ պայմանով, որ այն ստանում է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի համապատասխան արտահանողների եւ (կամ) նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի արտադրողների համաձայնությունը եւ նախատեսվող ստուգման մասին նախապես պաշտոնապես ծանուցված Կողմի լիազոր մարմնի կողմից առարկությունները բացակայում են:

Ստուգումն անցկացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն ուղարկված հարցերի ցանկերի պատասխանները ստանալուց հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրյա արտադրողը կամ արտահանողը կամավոր կերպով համաձայնում է անցկացնել ստուգում նախքան նշված պատասխանները ստանալը եւ համապատասխան օտարերկրյա պետության կողմից առարկությունները բացակայում են:

Ուսումնասիրության համապատասխան մասնակիցների համաձայնությունը ստանալուց հետո եւ նախքան ստուգումն սկսելը նրանց է ուղարկվում այն փաստաթղթերի եւ նյութերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն ստուգում անցկացնելու համար նշանակված աշխատակիցներին: Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ծանուցում է օտարերկրյա պետությանն օտարերկրյա այն արտահանողների կամ արտադրողների

հասցեները եւ անվանումները, որոնց նախատեսվում է ստուգել, ինչպես նաեւ նման ստուգումներն անցկացնելու ամսաթվերը:

Ստուգման ընթացքում կարող են պահանջվել նաեւ այլ փաստաթղթեր եւ նյութեր, որոնք անհրաժեշտ են հարցարանի պատասխաններում ներկայացված տեղեկության հավաստիությունը հաստատելու համար:

Եթե ստուգման անցկացման ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը մտադրվում է նման ստուգման նպատակով ներգրավել տվյալ մարմնի աշխատակիցներ չհանդիսացող փորձագետների, ապա ուսումնասիրության այն մասնակիցները, որոնց նկատմամբ նախատեսվում է իրականացնել ստուգման աշխատանքները, պետք է նախապես ծանուցվեն ուսումնասիրություն իրականացնող մարմնի նման որոշման մասին: Նման փորձագետների մասնակցությունը ստուգմանը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրանց կողմից՝ ստուգման հետ կապված ստացված տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պայմանը խախտելու համար առկա է սանկցիաների կիրառման հնարավորություն:

(4-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Ուսումնասիրության ընթացքում ստացված տեղեկությունները ստուգելու կամ իրականացվող ուսումնասիրության հետ կապված հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի իր ներկայացուցիչներին ուղարկել շահագրգիռ անձանց գտնվելու վայր, հավաքել տեղեկությունները, անցկացնել խորհրդակցություններ եւ բանակցություններ շահագրգիռ անձանց հետ, ծանոթանալ ապրանքի նմուշների հետ եւ կատարել ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

6. Կողմ հանդիսացող պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինները պարտավոր են համապատասխան հայցերի դեպքում ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացնել ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ սույն Համաձայնագրով նախատեսված տեղեկությունները:

Ուսումնասիրություն իրականացնող մարմին ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ բանկային, հարկային, տնտեսական կամ այլ օրենքով պահպանվող գաղտնիք՝ բացառությամբ պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) հանդիսացող

տեղեկություններ կամ ծառայողական օգտագործման համար տեղեկություններ ներկայացնելիս, ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապահովում է նման տեղեկությունների օգտագործման անհրաժեշտ գաղտնիության մակարդակը եւ դրա պահպանման անվտանգությունը:

Ստացված տեղեկությունները հաշվի են առնվում ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրության իրականացման ընթացքում եւ դրա արդյունքների վերաբերյալ առաջարկությունները նախապատրաստելիս:

(6-րդ կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Հոդված 36

Շահագրգիռ անձինք

1. Ուսումնասիրության իրականացման ընթացքում շահագրգիռ անձինք են համարվում՝

1) նույնանման կամ անմիջապես մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակազնազցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) արտադրողները Կողմ հանդիսացող պետություններում.

2) Կողմ հանդիսացող պետություններում արտադրողների միությունները, որոնք մասնակիցների մեծամասնությունը նույնանման կամ անմիջապես մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակազնազցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) արտադրողներ են.

3) Կողմ հանդիսացող պետությունների արտադրողների միությունները, որի մասնակիցներն իրականացնում են նույնանման կամ անմիջապես մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակազնազցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) արտադրության ընդհանուր ծավալի ավելի, քան 25 տոկոսի արտադրությունը Կողմ հանդիսացող պետություններում.

4) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողը, օտարերկրյա արտադրողը կամ ներմուծողը, ինչպես նաև ապրանքների օտարերկրյա արտադրողների, արտահանողների կամ ներմուծողների միությունը, որի մասնակիցների մեծ մասն արտահանող օտարերկրյա պետությունից կամ ապրանքի ծագման երկրից տվյալ ապրանքի արտադրողներ, արտահանողներ կամ ներմուծողներ են.

5) արտահանող օտարերկրյա պետության կամ ապրանքի ծագման երկրի լիազոր մարմինը.

6) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի սպառողները, եթե նրանք օգտագործում են նման ապրանքն արտադրանքի արտադրության մեջ, կամ նման սպառողների միությունները Կողմ հանդիսացող պետություններում:

7) սպառողների հասարակական միությունները, եթե ապրանքը հիմնականում ֆիզիկական անձանց կողմից սպառման առարկա է:

(1-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձինք գործում են ինքնուրույն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով, որոնք ունեն փաստաթղթերով ձեւակերպված լիազորություններ:

Եթե ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձը գործում է լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը շահագրգիռ անձին փոխանցում է ուսումնասիրության առարկայի մասին բոլոր տեղեկությունները միայն այդ ներկայացուցչի միջոցով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 37

Գաղտնի տեղեկությունները

1. Շահագրգիռ անձի կողմից ուսումնասիրության մարմին ներկայացված տեղեկությունները քննվում են վերջինիս կողմից որպես գաղտնի տեղեկություններ այն

դեպքում, երբ տվյալ անձը ներկայացնում է հիմնավորումներ, որոնք վկայում են նաեւ այն մասին, որ նման տեղեկությունների բացահայտումը մրցակցային առավելություն կտա երրորդ անձին կամ կառաջացնի բացասական հետեւանքներ տվյալ տեղեկությունները տրամադրած անձի կամ այն անձի համար, որից վերջինս ստացել է նման տեղեկություններ:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Գաղտնի տեղեկությունները չեն հրապարակվում՝ առանց այն տրամադրած շահագրգիռ անձի թույլտվության:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Գաղտնի տեղեկություններ տրամադրած շահագրգիռ անձինք պարտավոր են դրա հետ տրամադրել վերջինիս ոչ գաղտնի տարբերակը:

Ոչ գաղտնի տարբերակը պետք է ներկայացված լինի բավականաչափ մանրամասնորեն՝ գաղտնի տեսքով ներկայացված տեղեկությունների էությունը հասկանալու նպատակով:

Բացառիկ դեպքերում շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել գաղտնի տեղեկության ոչ գաղտնի տարբերակով ներկայացման անհնարինության հիմնավորումները՝ նշելով, թե ինչ պատճառներով հնարավոր չէ ներկայացնել ոչ գաղտնի տարբերակը:

3. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատի, որ շահագրգիռ անձի կողմից ներկայացված հիմնավորումներով չի կարելի ներկայացված տեղեկությունները որակել որպես գաղտնի տեղեկություններ, կամ եթե գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը չներկայացրած շահագրգիռ անձը չի ներկայացնում գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակի ներկայացման անհնարինության հիմնավորում կամ ներկայացնում է այնպիսի տեղեկություններ, որոնք չեն կարող համարվել գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակի ներկայացման անհնարինության հիմնավորում, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է հաշվի չառնել այդ տեղեկությունները:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Դիմումատուների, ուսումնասիրության մասնակիցների, շահագրգիռ անձանց կամ Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից ուսումնասիրության

իրականացման նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացված գաղտնի տեղեկության հրապարակման, սեփական շահի համար այլ ոչ նպատակային օգտագործման համար ուսումնասիրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձինք կամ աշխատակիցները կարող են զրկվել «Եվրասիական տնտեսական համայնքի արտոնությունների ու անձեռնմխելիության մասին» 2001 թվականի մայիսի 31-ի կոնվենցիայով նախատեսված արտոնություններից եւ անձեռնմխելիությունից եւ ենթարկվեն պատասխանատվության՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգով եւ կանոններով:

Սույն հոդվածի նպատակով Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմիններ ասելով հասկացվում են Մաքսային միության անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինները եւ պետական իշխանության (կառավարման) տարածքային մարմինները, որոնք լիազորված են մաքսային գործունեության, վիճակագրության, հարկման, իրավաբանական անձանց գրանցման եւ այլ ոլորտներում, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններում Կողմ հանդիսացող պետությունների դիվանագիտական եւ առետրային ներկայացուցչությունները:

Ուսումնասիրություն իրականացնող մարմնում գաղտնի տեղեկությունների օգտագործման եւ պահպանման կարգը հաստատվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

(4-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 38

Արտահանող օտարերկրյա պետության ենթադրվող հատուկ լրավճարի առկայությունը հաստատելու համար անցկացվող խորհրդակցությունները

1. Դիմումները քննման ընդունելուց հետո եւ նախքան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման ընդունումն ուսումնասիրություն իրականացնող մարմինը պետք է առաջարկի արտահանող այն օտարերկրյա պետության լիազոր մարմնին, որից արտահանվում է այն ապրանքը, որի նկատմամբ առաջարկվում է սահմանել փոխհատուցման միջոց, անցկացնել խորհրդակցություն՝ ենթադրվող հատուկ լրավճարի

առկայության, չափի եւ տրամադրման հետեւանքների հետ կապված իրադրությունը ճշտելու եւ փոխադարձաբար ընդունելի որոշման հասնելու նպատակով:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Այդ խորհրդակցությունները կարող են շարունակվել նաեւ ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված խորհրդակցությունների անցկացումը չի խոչընդոտում ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը եւ փոխհատուցման միջոցի կիրառմանը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 39

Ուսումնասիրության հետ կապված ընդունվող որոշումների մասին ծանուցումը

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1. Ուսումնասիրության հետ կապված ընդունվող որոշումների մասին ծանուցումները հրապարակվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից Մաքսային միության հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Նման ծանուցումներն ուղարկվում են արտահանող օտարերկրյա պետության լիազոր մարմնին եւ ուսումնասիրություն իրականացնող մարմնին հայտնի այլ շահագրգիռ անձանց:

(1-ին կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Ուսումնասիրություն սկսելու մասին ծանուցումը պետք է պարունակի՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ամբողջական բնութագիրը.

2) արտահանող օտարերկրյա պետության անունը.

3) ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելու նպատակահարմարությունը հաստատող փաստերի համառոտ նկարագիրը.

4) Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծման ավելացված ծավալի առկայության ապացույցներ (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն սկսելու մասին որոշման ընդունման դեպքում)։

5) Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման հասցնելու վտանգի առկայության մասին վկայող փաստերի համառոտ նկարագիրը (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում)։

6) գնագցող կամ լրավճարված ներմուծման առկայության մասին դրական եզրակացության համար հիմքերի համառոտ նկարագիրը (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում)։

7) Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական դանդաղման մասին վկայող փաստերի համառոտ նկարագիրը (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում)։

8) այն հասցեն, որին շահագրգիռ անձինք կարող են ուղարկել իրենց կարծիքը եւ ուսումնասիրությանն առնչվող տեղեկությունները։

9) առնվազն 30 օրացուցային օր տեւողությամբ ժամկետը, որի ընթացքում շահագրգիռ անձինք կարող են հայտարարել իրենց՝ ուսումնասիրությանը մասնակցելու մտադրության մասին։

10) առնվազն 60 օրացուցային օր տեւողությամբ ժամկետը, որի ընթացքում ուսումնասիրության մասնակիցները կարող են միջնորդություն ներկայացնել հանրային լուսմներ անցկացնելու համար։

11) առնվազն 90 օրացուցային օր տեւողությամբ ժամկետը, որի ընթացքում շահագրգիռ անձինք կարող են գրավոր ներկայացնել իրենց մեկնաբանությունները եւ ուսումնասիրության հետ կապված տեղեկությունները։

(2-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակագնագցման կամ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու մասին ծանուցումը պետք է պարունակի

ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախնական եզրակացության բացատրությունը ներմուծման ավելացված ծավալի եւ դրանով պայմանավորված Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ նման վնաս հասցնելու վտանգի առկայության, գնագող կամ լրավճարված ներմուծման եւ դրանով պայմանավորված հասցված նյութական վնասի, նման վնաս հասցնելու վտանգի առկայության կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի էական դանդաղեցման մասին, ինչպես նաեւ մատնանշում այն փաստերի վրա, որոնց հիման վրա ընդունվել է ժամանակավոր հատուկ, ժամանակավոր հակազնագցման կամ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու մասին որոշում:

Ժամանակավոր հակազնագցման կամ ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու մասին ծանուցումը նույնպես պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողի անվանումը, կամ եթե հնարավոր չէ տրամադրել այս տեղեկությունները, ապա արտահանող օտարերկրյա պետության անվանումը.

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ մաքսային ձեւակերպման համար բավարար բնութագիրը.

3) գնագող ներմուծման առկայության մասին դրական եզրակացության համար հիմքերը՝ նշելով գնագցման չափը եւ հաշվարկի մեթոդաբանությունն ընտրելու համար հիմքերի եւ ապրանքի սովորական արժեքի եւ դրա արտահանման գնի համեմատության բնութագիրը (ժամանակավոր հակազնագցման տուրք սահմանելու դեպքում).

4) լրավճարված ներմուծման առկայության մասին դրական եզրակացության համար հիմքերը՝ լրավճարների առկայության փաստի բնութագրմամբ եւ ապրանքի մեկ միավորի համար հաշվարկված լրավճարի մասին նշումով (ժամանակավոր փոխհատուցման տուրք սահմանելու դեպքում).

5) նյութական վնասի, նման վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական դանդաղումը հաստատելու համար հիմքերը.

6) գնագող կամ լրավճարված ներմուծման եւ նյութական վնասի, նման վնաս հասցնելու վտանգի կամ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի

ստեղծման դանդաղման միջեւ պատճառահետեւանքային կապ հաստատելու համար հիմքերը:

(3-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

4. Հատուկ պաշտպանական ուսումնասիրության արդյունքներով ծանուցումը պետք է պարունակի այն հիմնական եզրահանգումները, որոնց հանգել են ուսումնասիրություն իրականացնող մարմինը՝ իր տրամադրության տակ ունեցած տեղեկությունների վերլուծության հիման վրա, եւ պետք է հրապարակվի ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրությունն ավարտվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց Մաքսային միության հանձնաժողովի կողմից՝ հատուկ պաշտպանական միջոց սահմանելու եւ կիրառելու կամ այն վերանայելու կամ հատուկ պաշտպանական միջոցը չեղյալ հայտարարելու մասին որոշման հրապարակման օրվանից ոչ ուշ՝ սույն Համաձայնագրի 40-րդ հոդվածի դրույթների համաձայն:

(4-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

5. Ուսումնասիրությունն ավարտվելու մասին ծանուցումը, որի արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը եզրակացության է եկել հակազնագցման կամ փոխհատուցման տուրք սահմանելու հիմքերի առկայության կամ համապատասխան պարտավորությունները հաստատելու նպատակահարմարության մասին, հրապարակվում է ուսումնասիրությունն ավարտվելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան Մաքսային միության հանձնաժողովի համապատասխան որոշման հրապարակման օրը, եւ պետք է պարունակի՝

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

1) ուսումնասիրություն իրականացնող մարմնի վերջնական եզրակացության պարզաբանումն ուսումնասիրության արդյունքների մասին.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2) այն փաստերի նշումը, որոնց հիման վրա կայացվել է նման եզրակացություն.

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3) սույն հոդվածի 3-րդ կետում նշված տեղեկությունները.

4) ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողների եւ ներմուծողների փաստարկների եւ պահանջների ընդունման եւ չընդունման պատճառները.

5) որոշումների ընդունման պատճառների մատնանշում՝ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 7- 11-րդ կետերի համաձայն:

6. Համապատասխան պարտավորությունները հաստատելու առնչությամբ ուսումնասիրությունն ավարտելու կամ կասեցնելու մասին ծանուցումը պետք է պարունակի նման պարտավորությունների ոչ գաղտնի տարբերակը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

7. Սույն հոդվածի դրույթները՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները, կիրառվում են կրկնակի ուսումնասիրություններ սկսելու եւ ավարտելու մասին ծանուցումների նկատմամբ:

Հոդված 40

Հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոց չկիրառելը

1. Մաքսային միության հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքներով կարող է սույն Համաձայնագրով նախատեսված հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոցը չկիրառելու մասին որոշում կայացնել նույնիսկ այն դեպքում, երբ նման միջոցի կիրառումը համապատասխանում է սույն Համաձայնագրով սահմանված չափորոշիչներին:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Նշված որոշումը կարող է ընդունվել այն դեպքում, երբ նման միջոցի կիրառումը կարող է վնաս հասցնել Կողմ հանդիսացող պետությունների շահերին, եւ վերանայվել այն դեպքում, երբ դրա կայացման համար հիմք հանդիսացած պատճառները փոփոխվել են:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

2. Հատուկ պաշտպանական, հակազնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու նպատակահարմարության մասին եզրակացությունը պետք է հիմնված լինի Կողմ

հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի, ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի սպառողների, եթե նրանք օգտագործում են ապրանքն արտադրանք արտադրելիս, եւ Կողմ հանդիսացող պետություններում նման սպառողների միությունների, սպառողների հասարակական միությունների, եթե ապրանքը հիմնականում ֆիզիկական անձանց կողմից սպառման ենթակա առարկա է, եւ տվյալ ապրանքի ներմուծողների շահերի ընդհանուր գնահատման արդյունքների վրա: Ընդ որում, նման եզրակացությունը կարող է կայացվել միայն այն բանից հետո, երբ նշված անձանց հնարավորություն է ընձեռվել տալու իրենց մեկնաբանությունները նշված հարցի շուրջ՝ սույն հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն:

Նման եզրակացությունը նախապատրաստելիս հատուկ ուշադրություն պետք է դարձվի Կողմ հանդիսացող պետությունների համապատասխան առետրային շուկայում առետրի բնականոն ընթացքի եւ մրցակցության վիճակի եւ Կողմ հանդիսացող պետությունների տնտեսության ճյուղի վիճակի վրա ներմուծման ավելացված ծավալի, գնագցող կամ լրավճարված ներմուծման խաթարող ազդեցության վերացման անհրաժեշտության վրա: Սույն հոդվածի 1-ին կետի դրույթներով նախատեսված Մաքսային միության հանձնաժողովի վերջնական որոշումն ընդունվում է շահագրգիռ անձանց կողմից տրամադրված բոլոր տեղեկությունների վերլուծության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից պատրաստված եզրակացության հիման վրա:

(2-րդ կետը՝ 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառման նպատակով նույնանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրության անցկացման դեպքում) կամ Կողմ հանդիսացող պետություններում նույնանման ապրանքի (հակագնացման կամ փոխհատուցման ուսումնասիրության անցկացման դեպքում) արտադրողները Կողմ հանդիսացող պետություններում, դրանց միությունները, ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծողները եւ ներմուծողների միությունները, ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի սպառողները, եթե նրանք օգտագործում են նման ապրանքն արտադրանք արտադրելիս, եւ Կողմ հանդիսացող պետություններում նման սպառողների միությունները, սպառողների հասարակական միությունները, եթե ապրանքը հիմնականում ֆիզիկական անձանց կողմից սպառման ենթակա առարկա է, իրավունք ունեն սույն Համաձայնագրի 39-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն հրապարակվող ծանուցման մեջ սահմանված ժամկետում ներկայացնել իրենց մեկնաբանությունները եւ տեղեկությունները նշված հարցի շուրջ: Այդ մեկնաբանությունները

Եւ տեղեկությունները կամ դրանց ոչ գաղտնի տարբերակը համապատասխան դեպքերում պետք է ներկայացվեն սույն կետով սահմանված մյուս շահագրգիռ անձանց՝ դրանց հետ ծանոթանալու նպատակով, որոնք իրավունք ունեն ներկայացնել իրենց պատասխան մեկնաբանությունները:

Սույն կետի դրույթների համաձայն տրամադրվող տեղեկությունները պետք է հաշվի առնվեն անկախ վերջինիս տրամադրման աղբյուրից՝ դրանց հավաստիությունը հաստատող օբյեկտիվ փաստերի առկայության դեպքում:

Մաքսային միության հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 1-ին կետի դրույթներով նախատեսված որոշման կայացման դեպքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապահովում է ծանուցման հրապարակումը, որը պետք է պարունակի Մաքսային միության հանձնաժողովի կողմից հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոց չկիրառելու մասին որոշում ընդունելու մասին պարզաբանում՝ նշելով այն փաստերն ու եզրահանգումները, որոնց հիման վրա ընդունվել է նման որոշումը:

(3-րդ կետն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրությամբ)

Բաժին VI Եզրափակիչ դրույթներ

Հոդված 41

Վեճերի լուծումը

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով: Եթե Կողմերը բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում, ապա վեճի կարգավորման միջոցի

վերաբերյալ Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 42

Փոփոխությունների կատարումը

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 43

Ուժի մեջ մտնելը, Համաձայնագրին միանալը եւ դրանից դուրս գալը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրաիրավական հիմքի ձեւավորմանը միտված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրությամբ:

Սույն Համաձայնագրի 30 հոդվածի 16-րդ կետը կիրառվում է՝ 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի համաձայն (այդ փաստաթղթի 43-րդ հոդվածի երկրորդ պարբերություն) մրցակցության միասնական կանոնները պահպանելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունները Մաքսային միության հանձնաժողովի կողմից փոխանցվելու օրվանից ի վեր:

(պարբերությունն ավելացվել է 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրությամբ)

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի հունվարի 25-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

(2011 թվականի հոկտեմբերի 18-ի Արձանագրության խմբագրությամբ)

(ստորագրություններ)